

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ ՈՐԻԵՆ ԽՈՒՐՉՈՒՅԱՆ

Գերմանացի խոշոր մտածող Մաքս Վեբերին (1864-1920), որը մեծ ազդեցություն է թողել հասարակական գիտությունների զարգացման ամբողջ գործընթացի վրա, մեզանում գրեթե չեն ճանաչում: Եվ դա պատահական չէ: Վեբերի մտավոր ժառանգությունը կրում է էլիտար բնույթ եւ առաջին հերթին նախատեսված է ընտրանու համար: Անցումային շրջանում գտնվող հայ հասարակությունում ընտրանիները ձեւավորման փուլում են, իսկ այն, ինչ արդեն կա, քիչ է համապատասխանում միջազգային հանրությունում ընդունված չափանիշներին: Այդ կապակցությամբ օգտակար ենք համարում ընդհանուր գծերով ներկայացնել Վեբերի պատկերացումները, մասնավորապես, քաղաքական ընտրանու վերաբերյալ:

Վեբերը իր «Քաղաքականությունը որպես կոչում եւ մասնագիտություն» հիմնարար քաղաքագիտական աշխատությունում գրում է. «Կա քաղաքականությունը մասնագիտություն դարձնելու երկու միջոց՝ կամ ապրել քաղաքականության «հաշվին», կամ էլ քաղաքականության «համար»: Քաղաքականության՝ որպես մասնագիտության «հաշվին» ապրում է նա, ով ձգտում է այն դարձնել եկամտուտի մշտական աղբյուր, քաղաքականության «համար» ապրում է նա, ում նպատակն այլ է»:

Առաջին կարգին պատկանող, նույնիսկ քաղաքական որոշակի բարձունքների հասած գործիչներին, որոնք, որպես կանոն, անգաղափար են, անսկզբունք, գորշ եւ անդեմ, ընտրանի համարել չի կարելի, քանզի վերջինս հոգեւոր հասկացություն է եւ նախատեսում է էապես անմյութական նպատակադրումներ:

Որո՞նք են, ըստ Վեբերի, քաղաքական ընտրանու բնորոշ հատկանիշները.

1. Կիրքը՝ գործի էության վրա կենտրոնանալու իմաստով, խանդավառ նվիրումը գործին, այն աստժուն կամ դեւին, որը տնօրինում է այդ գործը:

2. Միայն կիրքը չի կազմավորում անձին՝ որպես քաղաքական գործիչ, եթե, ծառայելով գործին, չի դարձնում այդ գործի հանդեպ պատասխանատվությունը կյանքի գլխավոր ուղեցույց:

3. Դրա համար անհրաժեշտ է ունենալ *աչքաչափ*՝ ընդունակություններին համախմբվածությամբ եւ հանգստությամբ ենթարկվելու իրակա-

նության ազդեցությանը, այլ խոսքերով՝ պահանջվում է *հեռավորության պահպանում* մարդկանց եւ երեւոյթների նկատմամբ:

Այդ առումով ուշագրավ է համեմատել Վեբերի մոտեցումները Գերմանիայում դասական կրթություն ստացած հայ իմաստասեր Յայկ Ասատրյանի ըմբռնումների հետ: Վերջինս առաջ է քաշում հայեցակարգ՝ հիմնված հետեւյալ հայեցակետերի վրա.

ա. պատմական զգացում,

բ. նպատակի կամք,

գ. ճիգի ժառանգություն:

Պարզաբանելով նշյալ հայեցակետերը՝ Ասատրյանն ընդգծում է. «Պատմական զգացումով է պայմանավորվում պատասխանատվության, որով երկյուղածությամբ դատելու եւ նվիրումով գործելու պահանջը: Նպատակի կամքը նախատեսում է գոյությունը իմաստավորելու եւ սրա հարցերին կյանքի շեշտով մերժենալու արհուրյուն: Ճիգի ժառանգությունը պարտադրում է հետեւողականություն, օգտաբար ստեղծագործելու ոգեկան ուժ»:

Ո՞ր խոչընդոտներն են արգելակում վերոհիշյալ հատկանիշների արտահայտմանը: «Քաղաքական գործիչը,- ընդգծում է Վեբերը,- ամեն օր եւ ամեն ժամ պիտի հաղթահարի իր մեջ տափակ, չափազանց «մարդկային» թշնամուն՝ հասարակ սնափառությունը՝ ամեն գործին ինքնատրման եւ ամեն հեռավորության պահպանման մահացու թշնամուն, ինչը տվյալ դեպքում նշանակում է հեռավորության պահպանում ինքն իր նկատմամբ»:

Վեբերի համոզմամբ, քաղաքականության ասպարեզում կա երկու մահացու մեղք՝ *հեռացում գործի բուն էությունից* եւ *անպատասխանատվությունը*: Սնափառությունը, այսինքն՝ պատեհ-անպատեհ առաջին պլան մղվելու պահանջնունքը, անխուսափելիորեն ստիպում է քաղաքական գործչին կատարել այդ երկու մեղքերը: Գործչի այդօրինակ պահվածքը պարտադրում է նրան ձգտելու իշխանության փայլուն խաբուսիկության, այլ ոչ թե իրական իշխանության, իսկ նրա անպատասխանատվությունը տանում է նրան դեպի իշխանության վայելքի՝ որպես այդպիսին, առանց վերջինիս խորքային, բովանդակային նպատակի:

Վեբերի դիտարկումը սնափառության վերաբերյալ հետագայում ստեղծագործաբար զարգացրեց նրա ինտելեկտուալ ազդեցությունը կրող, ոչ պակաս հայտնի գերմանա-ամերիկյան մտածող Էրիխ Ֆրոմը: Մշակելով նարկիստության (ինքնասիրահարվածության, ինքնահմայվածության) բարդույթի հայեցակարգը՝ նա նշում էր, որ դրա վտանգավոր հետեւանքներից է բանական դատողության կորուստը, որը տեղի է

ուճեցնում այն պահին, երբ խոսքը սեփական անձի մասին է: Իսկ սեփական անձը նմանատիպ մարդու համար ունի աներեւակայելի առավելություն ամբողջ մարդկության նկատմամբ:

Էլ ավելի վտանգավոր է նման տիպի մարդու վերաբերմունքը իր հասցեին հնչած քննադատությանը: Նա վերին աստիճանի զայրացկոտ է արձագանքում յուրաքանչյուր քննադատության՝ տեսնելով դրանում միայն թշնամական հարձակում, քանզի չի կարող նույնիսկ պատկերացնել, որ քննադատությունը կարող է ունենալ արդար եւ անաչառ բնույթ: Ընդդիմախոսի անհապաղ ոչնչացումը, ընդհուպ մինչեւ ֆիզիկականը՝ ահա նրա հրամայական մտահոգացումը:

«Քաղաքական գործիչների մեջ, – արձանագրում է Ֆրոմը, – հաճախակի է հանդիպում նարկիստության շատ բարձր աստիճան: Այն կարելի է համարել քաղաքական գործիչների մասնագիտական հիվանդություն: Նման անձինք բառացիորեն փառքից կախյալություն ունեն, հակառակ դեպքում ընկճվում են, նույնիսկ խելագարվում: Բայց մարդկանց վրա տպավորություն թողնելու եւ բուռն ծափահարություններ կորզելու համար պահանջվում է ոչ միայն տաղանդ, այլ նաեւ համապատասխան պայմաններ: Եվ մարդիկ, որոնք իրենց նարկիստության վերահաստատման կարիք ունեն, առանց կոնկրետ պայմանները եւ հնարավորությունները հաշվի առնելու՝ ձգտում են նորանոր հաջողությունների, քանզի քաղաքական կործանումը իրենց համար միաժամանակ հոգեկան սնանկություն է»: Այսպիսին են բախտախնդիր քաղաքական ուղեգծի մութ ենթագիտակցական ծալքերը:

Չետեւողականորեն լուսաբանելով քաղաքական ընտրանուն բնորոշ հատկանիշները եւ դրանց արտահայտմանը խոչընդոտող հանգամանքները՝ Վեբերը չէր կարող չանդրադառնալ հարցերի հարցին՝ քաղաքական գործչի կողմից արվող գործի էությանը: Նրա կարծիքով, այն գործը, որին ծառայելով՝ քաղաքական գործիչը ձգտում է իշխանության եւ կիրառում իշխանությունը, դա գործչի անձնական հավատի հարց է: Նա կարող է ծառայել ազգային կամ համամարդկային, սոցիալական, էթիկական կամ մշակութային, աշխարհիկ կամ կրոնական նպատակների, սակայն միեւնույն է՝ *անկեղծ հաստատում հավատը այդ նպատակների նկատմամբ միշտ պիտի առկա լինի*: Չակառակ դեպքում, Վեբերի որակմամբ, «արարածի ոչնչության» անեծքը ծանրացած է լինելու նույնիսկ ամենամեծ քաղաքական հաջողությունների վրա:

Այդ իմաստով, ինքը՝ Վեբերը, իր հավատը վաղուց գտել էր՝ հրապարակավ խոստովանելով, որ միշտ դիտարկել է ամբողջ քաղաքականությունը բացարձակապես ազգային տեսակետից: Վեբերը պաշտում էր իր

ազգն ու հայրենիքը եւ չէր կասկածում դրանց ապագային: Առաջին աշխարհամարտից անմիջապէս հետո նա հայտարարեց, որ «եթե ոչ մենք, ապա հաջորդ սերունդը կտեսնի վերածնունդը», իսկ դրան հասնելու գործում համաձայն էր դիմել ամեն մի միջոցի, բացառությամբ մեկի: *«Եթե զբաղվեի քաղաքականությամբ,- նշում էր նա,- Գերմանիայի վերածննդի, նրա նախկին վեհությունը վերականգնելու համար դաշինքի կզնայի աշխարհի յուրաքանչյուր ուժի, թեկուզ հենց սատանայի, բայց միայն թե ոչ հիմարության թագավորության հետ»:*

Տեղին է բերել Յայկ Ասատրյանի բնորոշումը. *«Տգիտությունը հանգանք չէ, եթե դա օժտված չէ չարության դիմամիզմով: Դա, անշուշտ, մի ուժ է - այն ուժը, որ հոգեւոր լեշեր է ստեղծում եւ թմբում կյանքի հոսանքը»:*

Շնորհիվ հենց մարտնչող «հիմարության թագավորության» գերիշխանությանը երկրում՝ Գերմանիան խայտառակ ծանր պարտություն կրեց Առաջին աշխարհամարտում: Վերերը այդ ազգային աղետի սկզբունքային տեսական պատճառը համարում էր սխալ քաղաքական տեսության ընտրությունը:

Մտածողը այդ աղետալի հետեւանքներ ունեցող փաստին տալիս էր հետեւյալ բացատրությունը: Մարդիկ, ամբողջությամբ վերցրած, զգալի չափով հակված են ներքուստ հարմարվել հաջողությանը կամ էլ նրան, ինչը խոստանում է հաջողություն, եւ այդ հարյուր տոկոսով երաշխավորվող հաջողության հասնելու ակնկալմամբ հաճախակի ոչ միայն ետին պլան են մղում սեփական սկզբնական տեսլականները եւ նրանց հասնելու միջոցները, այլ ընդհանրապէս հրաժարվում են նրանցից: Այն ժամանակվա Գերմանիայում նման քաղաքական վարքը կոչվում էր «իրապաշտ քաղաքականություն», որը հաշվի չէր առնում, որ արտակարգ իրավիճակներում պահանջվում են արտակարգ քաղաքական որոշումներ եւ դրանք իրականացնելու անհնարին թվացող միջոցներ:

Ճշմարտություն է, որ հաջողված քաղաքականությունը միշտ հանդիսանում է հնարավորի սահմանները իմանալու արվեստ: Բայց ճշմարտություն է եւ այն, որ հնարավորը հաճախ նվաճվում է լոկ շնորհիվ նրա, որ փորձ է արվում դուրս գալ նրա սահմաններից եւ ներխուժել անհնարին ոլորտը: Նա, ով դրան ընդունակ է, ընդգծում է Վերերը, պիտի լինի իր եւրթյամբ առաջնորդ, ավելին՝ պիտի լինի նաեւ հերոս: Բայց նույնիսկ նրանք, ովքեր ոչ առաջինն են եւ ոչ էլ երկրորդը, պիտի զինվեն ոգու ամրությամբ, առանց որի անհնարին է իրագործել նույնիսկ այն, ինչը հնարավոր է:

«Միայն նա՛, ով համոզված է, որ ինքը չի տատանվի, եթե աշխարհը

իրեն չափազանց հիմար թվա կամ չափազանց ստոր այն բանի համար, ինչը ուզում է ինքն աշխարհին առաջարկել, միայն նա՛, ով ի հեճուկս ամեն ինչի՝ ընդունակ է ասել՝ «այնուամենայնիվ»։ միայն նա՛ ունի մասնագիտական կոչում զբաղվելու քաղաքականությամբ»,- ամփոփում է Վերբերը:

Վերբերի վախճանից անցել է երեք քառորդ դարից ավելի, եւ աշխարհը անճանաչելիորեն փոխվել է: Սակայն փոխվե՞լ է արդյոք: Բոլոր ժամանակներում եղել են եւ կան վերբերյան չափանիշներին համապատասխանող մարդիկ, որոնք, գիտակցելով սեփական ազգի արտակարգ իրավիճակում գտնվելու օրհասական փաստը եւ ազգային մեծ խնդիրների իրացման անհրաժեշտությունը, առաջադրել են գաղափարներ, նպատակներ, որոնք պահանջում են ուժերի եւ կամքի գերլարում, նախատեսում են մեծ եռանդով եւ դիմամիզմով լի՝ ոչ հանգիստ, բայց կենսունակ եւ լիարժեք կյանք: Եվ եղել են ու կան ճիշտ հակառակ դիրք ու նկարագիր ունեցողներ, կուշտ եւ ապահով կյանքով ապրող «տան կենդանու» կարգավիճակի ջատագովներ: Թե ում հետեւից կգնա ժողովուրդը՝ դրանից էլ կախված կլինի երկրի ապագան:

**ՑԵՂԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐՅԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ***
Մուշեղ Լալայան

*«Ես ցեղահավատ եմ, եւ ահա՛ պաշտում եմ
ե՛ւ մի այլ աստվածություն՝ ցեղիս արյունը,
որի անարատության մեջ է իմ ցեղի ապագան»:*

«Ցեղակրոնության Հավատամք»-ից

Ինչպես ուսուցանում է ցեղային աշխարհայեցողությունը, մարդկության տեսակավորումը (բնության բազմազանությունն ընդհանրապես) Աստծո կամոք է եւ գոյություն ունի ի սկզբանե: Հետեւաբար, մարդկային ամեն ցեղ, ձգտելով պահպանել իր անկրկնելի տեսակը, աստվածահաճո գործ է անում: Ինքնահավիտենացման ձգտումով է ցեղն ապահովում Աստծո հետ կենդանի կապը, իսկ յուրաքանչյուր անհատ միայն ցեղի միջոցով է հնարավորություն ստանում մերձենալ Բացարձակին ու Հավերժին:

Սակայն բնության օրենքը ստիպում է տեսակներին** մշտական պայքարի մեջ լինել գոյության համար: Այդ պայքարում բնությունն ընտրում է ուժեղ եւ կարող ազգերին, իսկ թույլերն ու անկենսունակները հեռանում են պատմության ասպարեզից: Նրանց անհետացումը կատարվում է կամ բնաջնջման, կամ էլ ձուլման ճանապարհով:

Պատմության մեջ շատ չեն դեպքերը, երբ ազգերը վերացել են զանգվածային ոչնչացման միջոցով, մինչդեռ բազմաթիվ են ձուլման հետեւանքով նրանց անհետացումները:

Այս պարագայում բռնի մեթոդները՝ լեզվի արգելում, դավանանքի պարտադրում, ազգությունից ստիպողական հրաժարում եւ այլն, այնքան էլ արդյունավետ չեն, քանզի, հաճախ ուժի ազդեցությունն առաջ է բերում բնական հակազդեցություն: Ազգերի ձուլումն առավելապես իրականացվում է մշակութային կլանման կամ արյունախառնության միջոցով:

* * *

Սելեկցիայից հայտնի է, որ լավ տեսակ ստանալու համար հաճախ դիմում են խաչասերման: Բայց արդյո՞ք մարդկային տեսակների մետիսացումը դրական երեւոյթ է, արդյո՞ք խառնազգի սերունդն ավելի լավն է:

«Ով պատկանում է մաքուր, անխառն ցեղի, ամեն քայլափոխի զգում է դրա հմայիչ ուժը. ցեղային աստվածը երբեք չի լքում նրան». ասում էր անգլիացի հայտնի ցեղաբան Յուստոն Չեմբերլենը (1855-1927): Անցյալ դարի ֆրանսիացի նշանավոր հանրաբան-ազգագրագետ Ժոզեֆ Գոբինոն (1816-1882) անհետացող բազմաթիվ ցեղերի վրա կատարած ուսումնասիրությունների արդյունքում հանգեց այն եզրակացության, թե անհետացած պատճառն արյունախառնությունն է: Ինչպես պնդում են մի շարք գիտնականներ, հին հույների ու հռոմեացիների բարձր քաղաքակրթության անհետացման բուն պատճառներից մեկը նրանց՝ իբրեւ ազնիվ ու ազատ ազգեր, ստորին զերի ազգերի հետ խառնվելն էր: *«Յին մշակույթների մահացման միակ պատճառը եղել է արյան խառնումը եւ այստեղից բխող՝ ցեղի մակարդակի անկումը».* գտնում էր մեր դարի միապետներից մեկը: Եթե Չեմբերլենին կամ Գոբինոյին այսօրվա լիբերալներն ու երեկվա կոմունիստները միանշանակորեն պիտակում են՝ իբրեւ ռասիստներ (անշուշտ՝ վատ իմաստով), իսկ նրանց դատողությունները՝ «հակամարդկային», ապա գոնե հանընդհանուր ընդունելության արժանացած Կանտի խոսքերը մտորելու տեղիք պիտի տան. *«Չկա ավելի ճշմարիտ բան, քան այն, թե տարբեր ցեղերի խաչասերումը, որ վերջին հաշվով հանգեցնում է նրանց ոչնչացման, միանգամայն անթույլատրելի է մարդկային ցեղերի նկատմամբ»:*

Արյունախառնության կողմնակիցները գտնում են, որ իբր խաչասերումից առաջացած սերունդն ավելի ուժեղ եւ խելոք է լինում: Դժվար թե: ճապոնացիները երբեք չեն խաչասերվել, սակայն բացառիկ տաղանդ ունեն: Նույնը կարելի է ասել սկանդինավյան ազգերի մասին: Իսկ, օրինակ, մուլատների մոտ ակնհայտ են մտավոր պակասությունները:

Կան նաեւ պնդողներ, թե հայերը՝ որպես հնագույն ազգերից մեկը, ապրում են իրենց ծերության շրջանը եւ, որպեսզի չանհետանան, պետք է, օտար արյան ներմուծմամբ, «թարմացնեն» իրենցը, որով եւ կերիտասարդանան, կդառնան կենսունակ: Եվ օրինակ են բերում թուրքերին՝ փորձելով հիմնավորել, թե ինչպես է օտար զենների ներմուծումը նպաստավոր լինում տվյալ ազգի համար: Նախ, ազգի կենսունակությունը նրա

տարիքով չի պայմանավորվում, այլ՝ իր արմատներից սնվելու հանգամանքով: Հայրենիք կորցրած եւ ակունքներից հեռացած ազգերը կարող են ծերանալ եւ մահանալ, իսկ հայրենի հողից ու իրենց արարչական ակունքներից սնուցվող ազգերը միշտ էլ կենսունակ են: Այժմ՝ թուրքերից ընդօրինակելու մասին: Այսօրվա Անատոլիայի թուրքերը, շնորհիվ նաեւ արյունախառնության, մեծամասամբ, մարդաբանական հատկանիշներով այլեւս միջինասիական տափաստանների բնիկները չեն, իսկ բազմակի խաչավորման արդյունքում դեռեւս նոր մշակութային կամ գիտական արժեքներ չեն ստեղծել: Ի դեմս նրանց՝ մենք առավելաբար տեսնում ենք ոչ թե ազնվացած թուրքին, այլ՝ այլասերված հային, հույնին... Տեղին է վկայակոչել Հայկ Ասատրյանին. «Հայտնի է, որ կենսաբանական թե հոգեբանական պատճառներով ցեղերի արենախառնումով չի ազնվանում նրանցից նվազարժեքը, այլ՝ խաթարվում, վատասերվում է արժեքավորը: Այսպես՝ քրիստոնյա ժողովուրդներից ստացած արյունը ո՛չ թե բարեխառնություն մտցրեց թուրքերի բնազդների աշխարհում, այլ հոգեբանությամբ թուրքացրեց ծուլվածներին»:

Հավատ ընծայելով, թե մեր ցեղը բնականից օժտված է բարձրորակ հատկանիշներով, աներկբա ասում ենք, որ օտարներից հոգեւոր կամ մարմնական գծեր ներմուծելու կարիք բնավ չունենք, իսկ Տեսակը խաթարելու բարոյական իրավունք չունենք: Թուրքերը՝ իբրեւ ստորին ցեղ, ներմուծման խնդիր ունեն, իսկ մենք պետք է վերագտնենք մեր հոգեգծերը, վերականգնենք մեր դիմագծի անաղարտությունը: Թերեւս, այս է հաստատում նաեւ սփյուռքահայ գիտնական Հակոբ Պողոսյանը, որից հարկ ենք համարում ընդարձակ մեջբերում անել.

«Հայերուն պարծանքը եղած է այն, թե դարավոր հալածանքներու եւ տառապանքներու ընթացքին՝ մինչ ուրիշ շատ մը ցեղեր իրենց գոյությունը կորսնցուցած են, իրենք դեռ կապրին. անոնք այս իրողությունը ամեն բանե առաջ կպարտին իրենց ազնիվ արյան: Թուրքն ալ այս իրողության վերահաս ըլլալով էր, որ իր անարգ ու վատ արյունը ազնվացնելու համար, հայ ցեղին հետ ամուսնանալու եւ խառնվելու ամեն միջոց որոնեց, եւ այսօրվան զեղեցիկ Թուրքին երակներուն մեջ Հայու ազնիվ արյունը կհոսի: Ավա՛ղ, որ այս իրողությունը տակավին շատերու կողմե լավ ըմբռնված չէ:

Անհրաժեշտ է, որ ապագա ազգին վերաշինության ու ազնվացման աշխատող թե՛ ազգային իշխանություններ եւ թե՛ հասարակական պատասխանատու առաջնորդներ այս խնդրին վրա լուրջ ուշադրություն դարձնեն»:

Ոմանք էլ մեզանում առկա մի շարք ժառանգական հիվանդություններ,

հատկապես «երեւանյան» կոչվող հիվանդությունը, համարում են հայերիս՝ երկար ժամանակ մեկուսացված լինելու, ուրիշների հետ չխառնվելու արդյունք: Չմոռանանք, որ սա ընդամենը վարկած է՝ դեռեւս կարոտ գիտական հիմնավորումների: Բայց ուշադրության արժանի է նաեւ հետեւյալը. «երեւանյան» հիվանդությամբ տառապողները, հիմնականում, մեր հարթավայրային շրջանի բնակիչներն են, ուր խառնազգի ամուսնությունները համեմատաբար շատ են, իսկ լեռնային շրջաններում, որտեղ, իբրեւ կանոն, «դրսից աղջիկ» հազվադեպ են բերում, նման հիվանդներ գրեթե չկան:

Այժմ անդրադառնանք խառնազգի ընտանիքին, որն արյունախառնության հիմնական ձեւն է:

Ընտանիքը, լինելով ազգի կարեւորագույն օրգաններից մեկը, նախասահմանված է՝ սերնդագործմամբ ազգի ժառանգական հաջորդականությունն ապահովելու եւ իր ներսում նորահաս սերնդի ազգային սկզբնական դաստիարակությունն իրականացնելու: Ըստ այդմ՝ ընտանիքի ապազգայնացումը, որն իրականացվում է արյունախառնության եւ օտար բարքերի ընդօրինակման ձեւով, կործանարար է ազգի գոյության համար:

Որքան էլ խառնազգի ընտանիքում ամուսինները լինեն լայնախոհ կամ, այսպես ասած, փոխադարձ սիրով, միեւնույն է՝ նրանց էությունների բնական տարբերությունն, ի վերջո, զգալ է տալիս: Լավագույն դեպքում, ամուսիններից մեկը «մոռացության» է տալիս իր ազգությունը՝ լիովին կանգնելով մյուսի ազգության կողմը (հաճախ՝ ընտանիքը չքայքայելու մտածումով) եւ այդպիսով՝ արհեստականորեն ազգափոխ լինում: Իսկ սերո՞ւնդը: Նա երկվության մեջ է լինում, նրանում մշտապես երկու տարբեր հոգեբանությունների պայքար է ընթանում եւ արդյունքում՝ հոգեբանորեն նա մնում է երկփեղկված, ասել է՝ անլիարժեք: Ինչպես նկատում է Լ. Շանթը. *«Այս տեսակ հարկի մը տակ մեծացող սերունդը երկակենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրա միաժամանակ ապրող, բայց ո՛չ ջուրին մեջ կարգին լողալ գիտե, ո՛չ ցամաքի վրա մարդավարի քայլել. եւ հաճախ կվերջանա անով, որ ջուրն ալ կատե, ցամաքն ալ, թեեւ իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կմնա միշտ վառ՝ կա՛մ ջուրինը ըլլալու, կա՛մ ցամաքինը»:*

Չայոց պատմության մեջ դժվար է մատնանշել դեպք, երբ օտարից ծնված զավակը օգտակար է եղել մեր ազգին: Նրանք, եթե ունեցել են շնորհներ, որպես կանոն, հայության համար որեւէ ծառայություն չեն մատուցել: Իսկ հակառակը եղել է. Տիգրան Մեծի՝ պոնտացի կնոջից ծնված զավակները չարիք էին հայկական կայսրության համար, հայերին

բնաջնջող սուլթան Չամիդի մայրը հայուհի էր: Այս առումով, ուսուցանող է նաեւ մեր էպոսը. Իսմիլ Խաթունից եւ Մեծ Միերից ծնված Մելիքը պատուհաս է դառնում հայության գլխին, Դավիթը սպանվում է իրենից սերված խառնածին աղջկա կողմից:

Սխալ կլինի կարծել, թե մեզանում խառնամուսնությունների խնդիրը երբեւէ ուշադրության չի արժանացել: Հայ եկեղեցին, արգելելով «լուսավորչական» հայերի ամուսնությունն այլադավանների հետ, այդպիսով, փաստորեն, անուղղակիորեն մերժել է խառնազգի ամուսնությունները: Ազգային բարերար Ալ. Մանթաշյանցը, իր հարստությունը որդիներին կտակելիս, ընդգծում էր մի կարեւոր նախապայման. որդիները կզրկվեն ժառանգության իրավունքից, եթե չամուսնանան հայադավան օրիորդների հետ: Ռ. Պատկանյանը, իր հայտնի «Վարդապետարան»-ում, հայկական մոլորությունների շարքում նշելով նաեւ օտարի հետ ամուսնությունը, հորդորում էր՝ իբրեւ ազգասիրական գործ, չամուսնանալ այլազգիների հետ:

Հաճախ է պատահում, երբ լավագույն հայորդիներ, ինչ-ինչ պատճառներով, ամուսնանում են օտարների հետ՝ ազգի համար չթողնելով արժանավոր սերունդ: Պատկառանք տածելով Քր. Միքայելյանի հանդեպ՝ անվանի հրապարակախոս Միք. Վարանդյանը, միաժամանակ, ցավով նշում է, որ արեւմտահայ ազատամարտի ռաիվիրան ամուսնացած էր օտարի հետ, տղան էլ, մոր ազդեցությամբ, ընդմիշտ հեռացավ հայ կյանքից ու ամուսնացավ ռուսի հետ: Եվ Վարանդյանը եզրակացնում է. «այդպես են վերջանում գրեթե բոլոր ամուսնությունները օտարի հետ»: Իհարկէ, օրինակների թվարկումը կարելի է շարունակել՝ Ռուբեն Սեւակ, Արամ Խաչատրյան, Տիգրան Պետրոսյան, Վիկտոր Համբարձումյան..., բայց դա թվում է ավելորդ (հուսով եմք, որ միայն թվում է), երբ աչքիդ առաջ հայտնվում է մեր ներկան...

Երբ մի քանի տարի առաջ ժառանգաբան Նվարդ Քոչարին հարցրինք, թե արդյո՞ք ինքը համաձայն կլիներ, որ հայը, օրինակ, նեգրի հետ ամուսնանար, նա պատասխանեց.

- Եթե ընտրեց, ամուսնացավ, այո, համաձայն եմ: Կարելորդ՝ որ նա հայկական միջավայրում ապրի եւ հայանա: Ի՞նչ վատ կլինի, եթե նեգրի երաժշտականությունը, ռիթմի զգացողությունը ներմուծվի:

Թե ինչպես պիտի նեգրը հայանա, նույնիսկ երեւակայությունը թույլ չի տալիս պատկերացնել: Իսկ որ հայերս երաժշտականության բնածին պակաս ունենք եւ ստիպված պիտի ուրիշից ներմուծենք, շատ անլուրջ է:

Ներկայումս խառնազգի ամուսնությունները մեզանում (լինի Հայրենիքում թե Սփյուռքում) առավելապես կատարվում են հաշվենկատորեն,

երբ, բարեկեցիկ կյանքի ակնկալիքով, շատ հայեր «ամուսնանում» են եվրոպացիների, ամերիկացիների, արդեն՝ նաեւ պարսիկների, արաբների հետ:

Խառնամուսնություններին զգալի չափով նպաստում են օտարի տիրապետությունը, պանդխտությունը, ազգերի կրոնակցությունը, բայց, ամենամեծ չափով, աշխարհաքաղաքացիական քարոզչությունը: Ու մինչ մեր ազգային դաստիարակության գործը մնում է այսպես՝ սոսկ փաստեր արձանագրող, ականատեսն ենք դառնում հայ-նեգրական, հայ-թուրքական ամուսնությունների...

* * *

Վերջում՝ մի էական հանգամանք: Պատմության բերումով մեզ են խառնվել տարբեր ազգեր, եւ այդ արյունախառնման շնորհիվ է նաեւ, որ մեր հոգեմարմնական շատ գծեր խեղված են: Ուրեմն ի՞նչ իմաստ ունի խոսել արյան մաքրության, ցեղի անաղարտության մասին:

Ջուլյալ ակունքից սնվող առվակը պղտորվում է, երբ փոխում է իր հունը, կամ նրա մեջ սկսում են լցվել անմաքուր ջրեր, եւ բավական է փակել այդ ջրերի ճամփան ու վերականգնել բնական հունը՝ այն աստիճանաբար կդառնա այնպես մաքուր, ինչպես եղել է հազարամյակներ շարունակ. կմաքրվի, եթե ակունքը դեռեւս անաղարտ է: Այդպես էլ մասնակի արյունախառնության ենթարկված ու սեփական հունից շեղված հայությունը վերստին կնույնանա իր ակունքին՝ Ցեղին, այսինքն՝ կվերականգնի իր դասական-ցեղային հոգեմարմնական գծերը, եթե բացառի օտար արյան ներմուծումը եւ առաջնորդվի սեփական հոգեւոր-բարոյական արժեքներով: Էականը հավատն է այդ վերականգնելիության նկատմամբ, հավատը, որ Ցեղը դեռ անեղծ է: Եվ պատահական չէ, որ Ցեղակրոնության Հավատամքում ցեղահավատությունն ու արյան անարատության պաշտամունքը Նժդեհը դրել է կողք կողքի:

* Արյունախառնության խնդիրը, լինելով նրբին ու ոչ երկրորդական, մեզանում դեռեւս անհրաժեշտ չափով լուսաբանված չէ, եւ մեր դատողություններն, անշուշտ, դեռ կարիք ունեն գիտական ամենալուրջ հիմնավորումների: Կարծում ենք՝ ժամանակն է, որ այս խնդիրն ընկալվի իբրեւ համազգային գործ եւ դառնա մեր պետության ու նրա գիտական հիմնարկների ուշադրության առարկա:

** Շարադրանքը պարզեցնելու համար, իբրև տեսակներ՝ նկատի ենք առել ազգերին, որոնք, ինչպես ընդունված է ասել, ձեւավորվել են երկու կամ ավելի ցեղերի միությունից կամ ձուլումից: Իբրև բնական (արարված) տեսակներ՝ մենք համարում ենք ցեղերին, իսկ ազգերը դիտում՝ որպես պատմականորեն առաջացած, բայց բնության կողմից «հանդուրժվող» տեսակներ:

Մեր համոզմամբ, շատ թե քիչ կայուն ազգեր առաջանում են միեւնոյն ռասայի ցեղերի ձուլումից, իսկ տարբեր ռասայի ցեղերի խառնումից երբեք լիարժեք ազգություն առաջանալ չի կարող: Այս իմաստով, օրինակ, ամերիկյան ազգ (կամ սոցիալիստական ազգ, իսլամական ազգ...) ասվածը շինծու է ու երբեւէ իրականություն դառնալ չի կարող:

ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ Կարեն Վերանյան

Վրաստանի վարչատարածքային նոր բաժանման համաձայն, Սամցխե եւ Ջավախք շրջանները կազմեցին մեկ ընդհանուր նահանգ՝ ներառելով վեց շրջան: Ջավախքը, որի բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են, ընդգրկում է երկու շրջան՝ Ախալքալաքը եւ Նինոծմինդան, Սամցխեի կազմում են նահանգի մնացած չորս շրջանները՝ Ախալցխան, Ադիգենը, Ասփինձան եւ Բորժոմը: Սամցխե-Ջավախք նահանգում բնակվող վրացիների ընդհանուր թվաքանակը հաշվվում է ընդամենը 99.356 բնակիչ, մինչդեռ հայերը ողջ նահանգում կազմում են շուրջ 136.198: Սամցխեի եւ Ջավախքի միավորումը մեկ ընդհանուր նահանգի կազմում կանխատեսված քաղաքականության հետեւանք էր, քանի որ երկրի ղեկավարությունն այլեւս չէր հաշտվում Ջավախքի՝ որպես առանձին վարչական միավորի, գոյության, ջավախահայության մոնոթեմիկ բնակեցման մտքի հետ:

1994թ. հատուկ հրամանով պետության ղեկավարը այս շրջաններում ներմուծեց, այսպես կոչված, «Լիազոր ներկայացուցիչների ինստիտուտը»: Արդյունքում՝ Վրաստանի նախագահն է փաստացի նշանակում Սամցխե-Ջավախքի ներկայացուցչին եւ տեղական կառավարիչ՝ «զամ-գիբելիներին»: Միակ ընտրվող սուբյեկտը տեղական ինքնակառավարման մարմինն է՝ «սակրեբուլոն», որն օժտված է բավականին սահմանափակ իշխանությամբ:

Սամցխե-Ջավախքի բնակչության էթնիկ հարաբերակցությունը

Ախալքալաքում եւ Նինոծմինդայում գերակշռում է հայ բնակչությունը, իսկ նահանգի մյուս շրջաններում տեղի բնակչության մեծամասնությունը էթնիկ վրացիներ են (տե՛ս աղյուսակ): Շրջանում բնակություն են հաստատել նաեւ ռուսական, հրեական եւ հունական փոքրաթիվ համայնքներ: Ախալքալաքի շրջանում գտնվում են նաեւ մի քանի էթնիկ վրացական գյուղեր, սակայն տեղի վրացի բնակչությունը գրեթե ամբողջությամբ ինտեգրվել է հայ համայնքին: Նահանգում համեմատաբար հախուռն է բնակեցված Ախալցխիսան: Վերջինս, հանդիսանալով նահանգի վարչական կենտրոնը եւ գտնվելով գլխավոր հաղորդակցական ուղիների

շրջանում, այլ շրջանների համեմատ ավելի բարվոք տնտեսական պայմաններ ունի, ինչը որոշակիորեն նպաստում է տեղի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, ինչպես եւ նվազեցնում է ազգամիջյան հնարավոր սրացումների հավանականությունը:

**Նահանգի էթնիկական հարաբերակցությունը
(Վրաստանի կառավարության վիճակագրության տվյալներ)**

Շրջան	Վրացիներ	Հայեր	Այլ ազգություններ	Ընդամենը
Ախալցխա	31.913	22.309	1.245	55.467
Ասփինձա	12.020	2.497	71	14.588
Ադիգեն	22.682	1.122	447	24.251
Բորժոմ	28.519	3.816	5.733	38.068
Ախալքալաք	3.787	71.281	1.122	76.190
Նինոծմինդա	435	35.173	1.293	36.901
Սամցխե-Ջավախք	99.356	136.198	9.911	245.465

Դեռեւս 90-ականների սկզբին, երբ Վրաստանը կանգնած էր աբխազական ու հարավօսական հակամարտությունների առջեւ, իրավիճակը Ջավախքում չվերածվեց ազգամիջյան հակամարտության: Տեղի հայ համայնքը գլխավորապես առաջ էր քաշում ինքնավարության պահանջներ, որոնք աջակցություն էին ստանում Ջավախքի հայկական ազգային կազմակերպությունների կողմից, օրինակ՝ «Ջավախք» շարժումը, որը 1991-92թթ. բավականին մեծ հեղինակություն էր վայելում տեղի հայերի շրջանում (90-ականների երկրորդ կեսից ջավախահայության շրջանում առաջ եկավ նոր քաղաքական ուժ՝ «Վիրք» կուսակցությունը): Ավելին, երկրի նախկին նախագահ Ջ. Գամսախուրդիայի կառավարության կարգախոսները, օր.՝ «Վրաստանը վրացիների համար», դրդեցին տեղի բնակիչներից շատերին, այդ թվում նաեւ հայերի ու ռուսների, լքել Ջավախքը եւ մշտական բնակություն հաստատել Ռուսաստանում:

Թուրք մեսխեթների հիմնախնդրի շուրջ

Առավել խնդրահարույց է Սամցխե-Ջավախքում թուրք մեսխեթների վերաբնակեցման հարցը: Դեռեւս շարունակվում են նրանց ազգային պատկանելության շուրջ ընթացող բանավեճերը. ուսումնասիրողներից ոմանք հաստատում են, որ նրանք իսլամ ընդունած էթնիկ վրացիներ են,

իսկ մյուս մասի կարծիքով՝ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում Վրաստան եկած թուրքեր: Խնդիրն այն է, որ նախքան 1944թ. Սամցխե-Ջավախք նահանգի գրեթե բոլոր շրջանները, ներառյալ Ախալքալաքը, հյուրընկալել էր մեծաթիվ քանակություն կազմող թուրք մեսխեթների: Ստալինյան ժողովրդական տեղահանումների ծրագրի համաձայն, շուրջ 100.000 թուրք մեսխեթներ այս շրջաններից վերաբնակեցվեցին Կենտրոնական Ասիայում, գլխավորապես՝ Ուզբեկստանում: 1989թ. հունիսին Ֆերգանայի հովտում տեղի ունեցած ազգամիջյան բախումների արդյունքում նրանց մի մասը վերաբնակեցվեց Կենտրոնական Ասիայի այլ երկրներում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Ադրբեջանում եւ Թուրքիայում: Թուրք մեսխեթները մեծ թիվ են կազմում Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, ինչին տեղացիները խիստ բացասաբար են մոտենում: Կրասնոդարի երկրամասի թուրք մեսխեթների զգալի մասը, չնայած այստեղ վերաբնակվել է գրեթե 10 տարի, այնուհանդերձ, չունի մշտական բնակության իրավունք, ուստի ենթարկվում է որոշակի հետապնդումների: Իրավիճակն այլ է Ադրբեջանում, որտեղ նրանց մեծամասնությունը համախմբված է բնակվում եւ ապահովված է աշխատանքով, մասնավորապես գյուղատնտեսության ոլորտում: Վերջին ժամանակներս նրանց վերաբնակեցման հարցերով ակտիվություն է ցուցաբերում ԱՄՆ-ը: 2004թ. փետրվարին ԱՄՆ ղեկավարությունն ընդունեց մի ծրագիր, որը նախատեսում էր թուրք մեսխեթների՝ Կրասնոդարի երկրամասից դեպի Միացյալ Նահանգներ կամավոր վերաբնակեցում: Ի դեպ, մեկնման հայտագրերն ընդունվում են միայն Կրասնոդարի երկրամասում բնակվող մեսխեթներից:

1999թ. Վրաստանն ընդունեց թուրք մեսխեթների՝ երկիր վերադառնալու 12-ամյա ժամկետացուցակ, որը դարձավ Վրաստանի՝ Եվրոպայի Խորհրդին անդամակցության նախապայման: Օրինագծի համաձայն, մինչեւ 2001թ. Վրաստանը պարտավորվում էր ընդունել վերադարձի մասին օրենք, սակայն այն մինչ օրս չի ընդունվել, քանի որ երկրի իշխանությունները լավ են հասկանում, որ թուրք մեսխեթների վերադարձը Վրաստան կհանգեցնի երկրի ներքաղաքական իրադրության ապակայունացման, ազգամիջյան բախումների, մանավանդ երբ դեռեւս չեն լուծվել աբխազական ու հարավօսական հակամարտությունները: Ինչպես նշել է Էդ. Շեւարդնաձեի իշխանության օրոք Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Գիվի Շուգարովը, «թուրք մեսխեթների վերաբնակեցումը հայաբնակ շրջաններում կարող է որոշակիորեն փոխել ռեզիոնի ազգագրական պատկերը: Սա մի հարց է, որի նկատմամբ անտարբեր չէ Հայաստանը, եւ մենք դրան մոտենում ենք ըմբռնումով»:

Ախալքալաքի ռուսական ռազմակայանի նշանակությունը

Ախալքալաքում է գտնվում Վրաստանի տարածքում տեղակայված ռուսական խոշոր ռազմակայաններից մեկը: Դեռևս 1999թ. նոյեմբերի 17-ին Ռուսաստանն ու Վրաստանը Ստամբուլում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովում ստորագրեցին մի պայմանագիր, ըստ որի՝ ռուսական կողմը պարտավորվում էր մինչև 2001թ. հուլիսի 1-ը դուրս բերել Վրաստանում տեղակայված չորս՝ Վազիանիի, Գուդաուֆի, Բաթումի ու Ախալքալաքի ռազմակայաններից առաջին երկուսը, ընդ որում՝ պայմանագիրը պարտավորեցնում էր կողմերին 2000թ. ընթացքում համաձայնության գալ Բաթումի ու Ախալքալաքի ռազմակայանների դուրսբերման ժամկետների հարցի շուրջ: Կրեմլը սկզբում առաջարկում էր ռազմակայանի դուրսբերման համար հատկացնել 15, այժմ՝ 11 տարի, իսկ պաշտոնական թբիլիսին պնդում է սահմանել ընդամենը 3 տարի ժամկետ:

Ախալքալաքի բնակչության համար ռազմակայանն ունի ինչպես ռազմավարական-քաղաքական, այնպես էլ տնտեսական նշանակություն: Ախալքալաքի ռուսական ռազմակայանում, ըստ վրացական աղբյուրների, ծառայում է շուրջ 968 տեղացի, որոնց մեծ մասը բնակվում է ռազմակայանի մերձակայքում եւ դրան հարող երկու՝ Դելիսկա ու Վականի գյուղերում: 1998թ. Ռուսաստանն ընդունեց նոր օրինագիծ, որի համաձայն ռուսական ռազմակայանի բոլոր զինծառայողները, այդ թվում եւ տեղի բնակիչները, այսուհետ ստանալու են ռուսական քաղաքացիություն. արդյունքում՝ շրջանում ռազմակայանի հավանական դուրսբերման դեպքում տեղացի զինծառայողները հարկադրված կլինեն մեկնել Ռուսաստան կամ Չայաստան: Ռազմակայանից տեղացիների տնտեսական կախվածությունը մեծանում է նաեւ այն առումով, որ շրջանի առեւտրաշրջանառության հիմնական դրամական միավորը ռուսական ռուբլին է:

Ռազմական հենակայանը տեղի հայ բնակչության համար նաեւ անվտանգության ապահովման երաշխիք է: Թուրքական իշխանությունների կողմից 20-րդ դարի սկզբին իրականացված հայերի ցեղասպանության հիշողությունը ամենեւին էլ չի մարել: Թուրք-վրացական հարաբերությունների սերտացման պայմաններում ջավախահայությունը մտավախություն ունի, որ շրջանում ռազմակայանի դուրսբերման դեպքում նրան կարող են փոխարինել թուրքական եւ ՆԱՏՕ-ի զորամիավորումները: Ավելին, 1999թ. ամռանը վրաց-թուրքական սահմանը վերահսկող ռուս սահմանապահներին փոխարինեցին ազգությամբ վրացի, իրենց թվաքանակով ավելի քիչ սահմանապահ ուժերը: Համեմատաբար թույլ է պաշտպանվում վրաց-թուրքական պետական սահմանի Ջավախքի հատվածը, ինչը խիստ մտահոգություններ է առաջացնում սահմանամերձ հայկական

գյուղերում: Ամենից խոցելին, թերեւս, Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղն է, որը գտնվում է սահմանի անմիջական հարեւանությամբ:

Մինչեւ 2001թ. վերջերը Հայաստանի ու Ախալքալաքի ռուսական ռազմակայանների համար Ռուսաստանից եկող մատակարարումների մեծ մասն անցնում էր Ախալքալաքի շրջանով: Այս փոխադրումները հատուկ արտոնակարգով ազատված էին մաքսային վճարումներից ու այլ պարտավորություններից: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց դեռեւս 2000թ. դեկտեմբերին, երբ Ռուսաստանի իշխանությունների կողմից վիզայի ռեժիմի ներմուծման արդյունքում Վրաստանի մաքսակետերը սկսեցին այդ բեռնափոխադրումներից գանձել 20% հարկ:

Ջավախահայության կրթական և սոցիալ-տնտեսական խնդիրների շուրջ

Վրաստանի կրթական համակարգը զգալի խոչընդոտների առջև է կանգնեցրել վիրահայությանը, մասնավորապես՝ Ջավախքի հայերին: Երկրի կրթական նոր օրինագծի համաձայն, երկրում գործող բոլոր պետական դպրոցներում հիմնական առարկաների դասավանդումն իրականացվում է վրացերենով: Հայկական դպրոցներում մայրենի լեզվով են դասավանդվելու միայն հայոց լեզվու և գրականություն առարկաները: Ավելին, այս ուսումնական տարվանից դպրոցական ծրագրերում չեն ընդգրկվել ֆակուլտատիվ դասաժամերը, եւ քանի որ հայոց պատմության հաստատագրված դասաժամեր հայտնի պատճառներով չեն հատկացվում, իսկ այդ առարկայի դասավանդումը հնարավոր էր միայն ի հաշիվ ֆակուլտատիվ դասաժամերի, արդյունքում՝ դրանց վերացումով հայ դպրոցականները փաստորեն զրկվում են սեփական ժողովրդի պատմությունը դպրոցում սովորելու հնարավորությունից: Դպրոցներում մեծ հուզում է առաջ բերել նաեւ վրացական ծրագրերով կազմված ութերորդ դասարանի աշխարհագրության դասագրքում հայերի՝ իրանական լեզվաընտանիքին պատկանելու մասին նախադասությունը:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նոր ուսումնական տարում Ջավախքի դպրոցների առաջին դասարանցիների թվաքանակը կրկին նվազել է: Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում առաջին դասարան են հաճախելու համապատասխանաբար 943 եւ 460 աշակերտ, 2003թ.՝ համապատասխանաբար 1,098 եւ 478 աշակերտ, իսկ 10 տարի առաջ՝ 1880 եւ 581 աշակերտ: Պարզվում է, որ 10 տարվա ընթացքում Ախալքալաքի շրջանի առաջին դասարանցիների թիվը նվազել է ավելի քան 900-ով, որից 155-ը՝ վերջին մեկ տարում, իսկ Նինոծմինդայի շրջանում՝ 121-ով (18-ը՝ կրկին վերջին մեկ տարում):

Վրաստանի բնակչությունը գտնվում է բավականին անմխիթար սոցիալ-տնտեսական պայմաններում, որոնք առավել ընդգծված են Սամցխե-Ջավախք նահանգում: Շրջանի աշխարհագրական տեղանքի, թույլ զարգացած ճանապարհային ենթակառուցվածքի եւ այլ պատճառներով այն ավելի քիչ է ինտեգրվել Վրաստանի այլ շրջաններին: 1990-ականների ընթացքում Սամցխե-Ջավախք նահանգում եւ մասնավորապես Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններում Հայաստանի հետ իրականացվող սահմանային առեւտուրը, ի տարբերություն Վրաստանի այլ շրջանների հետ առեւտրաշրջանառության, ավելի արագ տեմպեր է արձանագրել: Նահանգում բավականին անմխիթար է էներգամատակարարման հարցը, արդյունքում՝ հայաբնակ շրջանները զգալի գրկանքների առջեւ են կանգնում: Ներկայում Սամցխե-Ջավախքը 40 մեգավատի փոխարեն ստանում է ընդամենը 7 մեգավատ, որը հոգում է ընդամենը մեկ շրջանի կարիքները:

Կա մի լուրջ խնդիր եւս. Վրաստանի ղեկավարությունը նոր օրինագծի է մշակում, ըստ որի՝ զինծառայությունը պարտադիր է դառնում ոչ միայն հայ համայնքի, այլեւ ազերիների համար: ԽՍՀՄ փլուզումից ի վեր վիրահայ երիտասարդներին բանակ չէին զորակոչում՝ ազգամիջյան բախումներից խուսափելու պատճառաբանությամբ: Նոր օրինագծի համաձայն, այլեւս չի գործելու զորակոչից մեկ տարով տարեկետման համար երկրի Սահմանադրության շրջանակներում գործող 200 լարի վճարելու սկզբունքը:

Հետևություններ

Սամցխե-Ջավախք նահանգի սոցիալ-տնտեսական պայմանները, դրանք բարելավման ուղղությամբ երկրի ղեկավարության կողմից անհրաժեշտ աջակցության բացակայությունը խթանում են վիրահայության արտահոսքին երկրից, մանավանդ որ աստիճանաբար ավելի ակտուալ է դառնում այն հարցը, թե շրջանի հայ համայնքի անվտանգության ապահովման համար ինչ ձեւաչափ կարող է գործել Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմակայանի հավանական դուրսբերման արդյունքում:

Միաժամանակ, Ջավախքի հայ բնակչության կյանքի բարելավումն ու անվտանգության ապահովումը, առաջին հերթին, Հայաստան պետության եւ ողջ հայության կարեւորագույն խնդիրներից են:

**ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
Գագիկ Տեր-Չարությունյան**

Երբ 1999թ. Վ. Պուտինը եկավ իշխանության (համաձայն մի վարկածի՝ հատուկ կառույցների «խորքում» գործող «դերժավնիկների» պլանի իրագործման շնորհիվ), Ռուսաստանը մի քայքայված պետություն էր, որի վերջնական կազմալուծումը ժամանակի հարց էր թվում: Բավական է նշել, որ 1988թ. այդ երկրի բյուջեն մոտ 400 մլրդ ռուբլի էր, իսկ 1998թ.՝ ընդամենը \$24 մլրդ: Ի դեպ, համաձայն ազգային անվտանգության չափորոշիչների, տնտեսության 50% անկումը հավասարազոր է պետական համակարգի փլուզմանը: Բացի նյութական ոլորտի կորուստներից, Ռուսաստանը ապագադափարականացվել էր եւ բարոյալքվել, կորսվել էր երկրի ղեկավարելիությունը, փաստորեն չէին գործում պետական եւ ուժային կառույցները:

Կարող է տարօրինակ թվալ, սակայն այդ պետության հոգեբանական վերականգնման սկիզբը դրեցին 1999թ. ամռանը տեղի ունեցած ահաբեկչությունները Մոսկվայում եւ Բասաեւի ռեյդը Դադստան, որոնք կարծես թե սթափեցրին ռուսներին: Բացառված չէ, որ նույնիսկ ճիշտ լինի Բորիս Բերեզովսկու վարկածը, թե ՓՇԵ աշխատակիցները առնվազն տեղյակ են եղել այդ գործողություններին:

Այդ դեպքերից անցել է 5 տարի: Այսօր լուրջ չեն Ռուսաստանի կազմալուծման մասին խոսակցությունները: Այս կամ այն չափով սկսել են գործել պետական կառույցները: 2005թ. բյուջեն առաջին անգամ գերազանցեց \$100 մլրդ, իսկ ՅՆԱ-ն՝ \$500 մլրդ սահմանագիծը: Թերեւս կասկած չի հարուցում, որ համաձայն Պուտինի ծրագրի՝ այդ ցուցանիշները 2010-ին կկրկնապատկվեն: Սակայն դրանք ԽՍՀՄ ցուցանիշներին կմոտենան 2020-ի մատույցներում, իսկ Պենտագոնի բյուջեն գրեթե հավասար է Ռուսաստանի ՅՆԱ-ին:

* * *

Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը մնում է միջուկային գերտերություն, տիրապետում է հսկայական տարածքների եւ բնական ռեսուրսների: Այս հանգամանքների շնորհիվ Ռուսաստանը շարունակում է մնալ ԱՄՆ հիմնական մրցակիցը: Նրանց մրցակցությունը, ըստ որոշ հետազո-

տողների, ունի նաեւ էթնիկական բաղադրիչ՝ անգլո-սաքսոնների եւ սլավոնների մոտ 3-դարյա հակամարտությունը: Նշենք, որ սլավոնական աշխարհը երբեք այնքան պառակտված չի եղել, որքան այսօր, եւ դա «սառը պատերազմի» հիմնական արդյունքներից մեկն է:

Ներկայումս ԱՄՆ – Ռուսաստան հակամարտության առաջին «ճակատն» անցնում է Ուկրաինայով, իսկ երկրորդը՝ Կովկասով: Բեւալանի դեպքերի կապակցությամբ ԱՄՆ պաշտոնական անձանց հայտարարությունները վկայությունն են այն փաստի, որ իրադարձությունները Չարավային եւ Չյուսիսային Օսիաներում միասնական ծրագրի բաղադրիչներ են: Ավելացնենք, որ Բեւալանի դեպքերը կարելի է դիտարկել որպես յուրովի ռեւանշ Չարավային Օսիայում կրած միանշանակ պարտության դիմաց, որտեղ ամերիկյան եւ բրիտանական ուսուցում անցած վրացիները, կորցնելով 100 զինծառայող, ստիպված էին նահանջել:

Ռուսաստանի ներքին հիմնախնդիրը գտնվում է գաղափարական դաշտում. նոր պայմաններում դեռ չի գտնվել այն բանաձեւը, որը թույլ կտա միավորել եւ նպատակաուղղել այդ երկիրը, որն անգամ այսօր մնում է կայսրություն: Ավելին. համարվում է, որ կայսրության ձեւաչափից դուրս Ռուսաստանը չի կարող գոյատեւել: Այս կապակցությամբ նշենք, որ ցանկացած բազմազգ երկրում ծագում են խնդիրներ՝ կապված «հայրենիք» հասկացության հետ: Չարկ է ընդունել, որ այդ ոլորտում Կրեմլը բավական գրագետ քաղաքականություն է վարում: Այդ քաղաքականության հիմնական թեզն այն է, որ այսօրվա Ռուսաստանը դիտարկվում է որպես ցարական եւ խորհրդային հզոր կայսրությունների լիիրավ իրավահաջորդը:

Ռուսաստանում պետության մասնակցությամբ զգալի աշխատանք է տարվում նաեւ հոգեւոր ոլորտում: Բավական է նշել լայնածավալ քրիստոնեական քարոզչությունը եւ հրատարակվող հազարավոր անուն հոգեւոր գրքերն ու ամսագրերը, որոնց շնորհիվ մասամբ լուծվել է աղանդների հարցը եւ բնակչության մի ստվար հատված գտնվում է եկեղեցու ազեցության ներքո: Չատկանշական է, որ Ազգային ռազմավարության կենտրոնի (որի խորհուրդների նկատմամբ իշխանությունները հատկապես ուշադիր են) նախաձեռնությամբ մի քաղաքական շարժում է հարուցվել, որի նպատակն է 90-ականների սկզբում ԱՄՆ-ի կողմից ձեւավորված քաղաքական ընտրանուն ուղղափառ կողմնորոշում ունեցող ընտրանիով փոխելը: Սակայն ազգային ընտրանու ձեւավորման համար անհրաժեշտ է, որ մշակույթը եւ գիտությունը գործեն լիարժեք, ինչը Կրեմլին առայժմ չի հաջողվում իրագործել:

Ձանքերը կրոնի ոլորտում արդյունքեր են տալիս ոչ միայն երկրի

ներսում. թերեւս առաջին անգամ վերջին մի քանի հարյուրամյակում կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների միջեւ նկատվում է հարաբերությունների ջերմացում, որն ունի հստակ արտահայտված հակաամերիկյան եւ հակահարայելական ուղղվածություն: Սակայն չպետք է մոռանալ, որ այսօրվա իրողությունը տարբերվում է 19-20-րդ դդ. իրավիճակից եւ միայն ուղղափառության վրա հենվելով դժվար է միավորել Ռուսաստանը:

* * *

Բեալանի դեպքերի կապակցությամբ ունեցած իր ելույթում նախագահ Պուտինը փաստորեն ընդունեց, որ Ռուսաստանում ձեւավորված քաղաքական համակարգը թերի է եւ թույլ չի տալիս արդյունավետ դիմագրավել սպառնալիքներին: Սեպտեմբերի 13-ի կառավարության ընդլայնված նիստում ընդունվեց նրա նախաձեռնությունը, որ այսուհետ դաշնության սուբյեկտների ղեկավարներին երկրի նախագահի առաջադրմամբ պետք է ընտրեն տեղական օրենսդիր մարմինները: Առաջարկվեց նաեւ, որ Պետդումայի ընտրություններում գործելու է միայն համամասնական սկզբունքը:

Խնդիրն այն է, որ առ այսօր Ռուսաստանում կան տարածքներ (օրինակ՝ Չուկոտկան, որի նահանգապետն է նավթային մագնատ Ռոման Աբրամովիչը, Ալթայի Հանրապետությունը, որտեղ օդու գործարարները նախագահ «ընտրեցին» երգիծաբան-դերասան Եվդոկիմովին եւ այլն), որոնք դուրս են մնում Կրեմլի վերահսկողությունից: Միշտ չէ, որ Կրեմլին հաջողվում է վերահսկել նաեւ մեծամասնական ընտրությունները:

Վերոհիշյալ որոշումները (դրանց Պետդումայում հաստատվելը կասկած չի հարուցում) ավելի ղեկավարելի են դարձնում երկիրը եւ ինչ-որ չափով վերականգնում են ցարական եւ դրան բավական մոտ խորհրդային քաղաքական համակարգը: Միեւնույն ժամանակ նկատենք, որ այսօր սուբյեկտների մեծ մասում ղեկավարում են նորընտիր նահանգապետեր եւ նախագահներ: Դա նշանակում է, որ սպասվելիք փոփոխությունները սկսելու են իմաստավորվել 2007-2008թթ., երբ տեղի կունենան Դումայի եւ նախագահի ընտրություններ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ փոփոխությունների համատեքստում ընկած է նաեւ պուտինյան քաղաքական գծի պահպանման հիմնահարցը:

Այս առիթով ռուսաստանյան մամուլում առայժմ լուրջ քննարկումներ չեն ընթանում: Վերջին ընտրությունների ժամանակ հնչեցին առաջարկություններ, թե նախագահական ժամկետը պետք է երկարաձգել մինչեւ 7 տարի: Անձամբ Պուտինը մեկ անգամ է անդրադարձել այդ հարցին՝ հայ-

տարարելով, թե դեմ է 7 տարուն, սակայն 5 տարին ներկայիս 4-ի փոխարեն ավելի ճիշտ է գտնում: Սակայն բացառված չէ, որ նոր նախաձեռնություններից հետո այդ հարցը ավելի հիմնավոր լուծում ստանա: Դիտարկենք զարգացման հնարավոր տարբերակներից երկուսը:

Առաջինը՝ երբ նոր օրենքներով ընտրված, այսինքն՝ Կրեմլի կամքին լիովին ենթակա Դուման եւ սուբյեկտների ղեկավարները սահմանադրական փոփոխություններ են կատարում եւ վերացնում առավելագույնը 2 ժամկետով նախագահ ընտրելու սահմանադրական դրույթը:

Երկրորդ տարբերակը, որը պայմանականորեն կարելի է անվանել չինական, կարող է լինել այսպես. Պուտինը նշանակվում է Պետխորհրդի նախագահ՝ հիմնարար կերպով ընդլայնելով վերջինիս լիազորությունները: Հայտնի է, որ նման մի համակարգ մինչեւ վերջերս գործում էր Չինաստանում, երբ գլխավոր քարտուղարները հրաժարականներից հետո մնում էին ռազմական խորհրդի նախագահ՝ փաստորեն պահպանելով գերագույն իշխանությունը: Այս վերջին տարբերակի հնարավորության մասին է անուղղակիորեն վկայում նաեւ այն փաստը, որ Պետխորհրդի հիմնական նստավայրը այսօր Պետերբուրգն է: Ի դեպ, այդ քաղաքը վերականգնվում է որպես Ռուսաստանի երկրորդ մայրաքաղաք, եւ այնտեղ են մտադիր տեղափոխել պետական եւ դատական այլ բարձրագույն օղակներ:

Ակնհայտ է, որ Պուտինի տակավին երիտասարդ թիմը, որն արդեն ձեւավորել է պետության ղեկավարության իր մոտեցումները, պետք է որ հակված չլինի զիջելու իշխանությունը ուրիշներին: Արեւմտյան մամուլում շատ են հրապարակումները, որտեղ որպես Պուտինի հավանական հետնորդ նշվում է ՊՆ նախարար Սերգեյ Իվանովը: Սակայն նման հրապարակումները փաստական լուրջ հիմքեր առայժմ չունեն եւ ավելի շուտ «տեղեկատվական հետախուզության» բնույթ են կրում: Չի բացառվում նաեւ Դմիտրի Կոզակի տարբերակը, որը համարվում է թիմի «ուղեղային կենտրոնը»: Նրան Հարավային օկրուգի ղեկավար նշանակելը դիտարկվում է որպես փորձարկում «հրամանատարական» պաշտոնում:

Սիեւնույն ժամանակ պուտինյան որոշումներն իրենց բովանդակությամբ կարծես թե հակասում են ժողովրդավարության սկզբունքներին: Այս առիթով համապատասխան հայտարարություններ են կատարել եւ ԱՄՆ վարչակազմը, եւ եվրոպական կառույցները: Սակայն նկատենք, որ այսօր ժողովրդավարությունից «հեռանալը» բնորոշ է ոչ միայն Ռուսաստանին: Նման միտումներ ցուցաբերում են գրեթե բոլոր խոշոր տերությունները՝ առաջին հերթին՝ ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան:

* * *

Մինչեւ վերջերս արեւմտյան քաղաքագետները հիմնականում պաշտպանում էին այն թեզը, թե ժողովրդավարությունը պետական կառուցվածքի ամենաօպտիմալ ձեւն է: Նման մոտեցման հիմնական դրույթներից էր Մայքլ Դոյլի տեսությունը, համաձայն որի՝ պետությունների ժողովրդավարական համակարգը թույլ չի տալիս, որպեսզի նրանք միմյանց դեմ պատերազմներ մղեն: Սակայն այդ ամենը ճշմարիտ էր 20-րդ դարում, երբ պատերազմների առերես հրահրողները տոտալիտար պետություններն էին՝ Գերմանիան, ԽՍՀՄ-ը եւ ճապոնիան: Երկրորդ համաշխարհայինից հետո ձեւավորված երկրներն աշխարհում պատերազմները երկու տարբեր համակարգերի միջեւ բացառվում էին՝ միջուկային զենքի զսպող մեխանիզմի շնորհիվ:

Սակայն հենց միջուկային զենքի առկայությունը սառը պատերազմի տարիներին հրահրեց այլ բնույթի պատերազմական գործողությունների աննախադեպ ծավալում: Դրանց թվին են պատկանում տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական, հոգեւոր-կրոնական, կազմակերպչական (վերջինիս մեջ են մտնում, օրինակ, համապատասխան օրենսդրական նորմերի ներդրումը այլ պետություններում), կենսաբանական (այդ թվում՝ ժողովրդագրական) պատերազմները, ինչպես նաեւ դրանց խաչածեւումները:

Երկրներն աշխարհակարգի ժամանակավոր անցումը միաբեւեռի, վերջինիս՝ ներկայումս ընթացող կազմալուծումը եւ բազմաբեւեռ համակարգի ձեւավորման գործընթացները էլ ավելի կատարելագործեցին տարաբնույթ պատերազմների տեխնոլոգիաները: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ 21-րդ դարում «պատերազմ» հասկացությունը իմաստային փոփոխություն է ապրել եւ ստացել նոր ձեւեր ու բովանդակություն:

Սակայն բոլոր պարագաներում, ինչ ձեւ էլ որ ընդունում են այդ նոր տիպի պատերազմները, դրանք պահանջում են, որպեսզի հակամարտող պետության կառավարման եւ տնտեսության համակարգը ենթարկվի պատերազմական՝ մոբիլիզացիոն օրենքների, եւ համահունչ լինի պատերազմի տրամաբանությանը: Իրենց հերթին մոբիլիզացիոն մեխանիզմները հակասում են ժողովրդավարության սկզբունքներին: Այսօր այդ հակասություններն ավելի հաճախ լուծվում են «մոբիլիզացիոն» համակարգի օգտին, որի գլխավոր գաղափարախոսները տերությունների ռազմարդյունաբերական համալիրների եւ ռազմական-ուժային գերատեսչությունների ներկայացուցիչներն են: Այսօր հստակ նկատվում է դրանց դերի բարձրացում՝ ի վնաս ժողովրդավարական նորմերի: Ավելին. այսօր

տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել վերլուծությունների, որտեղ դիտարկվում են ժողովրդավարական համակարգերի բռնի տապալման սցենարներ:

Հիշենք, որ նախագահ Ռեյգանի օրոք, նրա դեմ կատարված մահափորձից հետո ՊՆ նախարար Յեյզը, խախտելով սահմանադրությունը, փորձ կատարեց իր ձեռքում կենտրոնացնել իշխանությունը: Համաձայն վստահություն ներշնչող տեղեկատվական աղբյուրների, նման մի փորձ կատարվել է նաև 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության օրը, երբ զինվորականները ցանկացել են մեկուսացնել Բուշին եւ զրկել նրան որոշումներ ընդունելու հնարավորությունից: Ի վերջո, այդ ուժերի ազդեցության տակ ԱՄՆ-ում ընդունվել են ազգային անվտանգությունն ամրապնդելու վերաբերյալ մի շարք կոշտ օրենքներ, որոնք թույլ են տալիս շատերին ԱՄՆ-ը անվանել տոտալիտար երկիր:

Այս ոգով են ընթանում նաև զարգացումները Ֆրանսիայում, որտեղ պետության ձեռքին է կենտրոնացված տնտեսության մինչև 60%-ը եւ որի հատուկ ծառայությունների գործունեությունը թերեւս ամենափական է աշխարհում:

Եթե պահպանվեն ներկայիս միտումները եւ ուժի կենտրոնների միջեւ մրցակցությունն ավելի ու ավելի նմանվի հակամարտության կամ այլ խոսքերով՝ պատերազմի, ապա կարելի է կանխատեսել, որ ապագայում ժողովրդավարական համակարգերը կարող են կազմալուծվել կամ ընդունել իմիտացիոն բնույթ՝ իրենց տեղը զիջելով «մոբիլիզացիոն» համակարգերին:

Այս նույն տրամաբանությանն են ենթարկվում նաև պուլտինյան վերջին նախաձեռնությունները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԻՄՆԱՅԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ Դավիթ Յովհաննիսյան

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի նստաշրջանին նախորդեցին մի շարք երկրների ղեկավարների, հայտնի քաղաքական գործիչների, գիտնականների ելույթները եւ հրապարակումները՝ նվիրված այս միջազգային կառույցի բարեփոխմանը:

ՄԱԿ համակարգի փոփոխման պահանջները կապված են այն իրողության հետ, որ այս կազմակերպությունը ստեղծվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ վերջինիս արդյունքների հիման վրա, իսկ համաշխարհային քաղաքականությունը եւ միջազգային հարաբերությունների համակարգը ներկայումս ամբողջովին տարբերվում են քառասունականների իրողություններից: Արդյունքում՝ այս մարմինը, որ պետք է «կարգավորի» եւ «կանոնակարգի» դեր խաղար հետսառնապատերազմյան շրջանում, չի ներկայացնում ժամանակակից աշխարհում ուժերի իրական դասավորությունը:

Միջազգային կամ համաշխարհային կազմակերպությունը՝ որպես համաշխարհային համակարգի ղեկավարման միջոց, աշխարհը որպես կազմակերպություն՝ այս գաղափարը վաղուց է ծնվել մարդկության մտքում, սակայն նման կազմակերպություն ստեղծելու առաջին իրական հնարավորությունը կապված է Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի հայտնի 14 կետերից վերջինի հետ, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Պետք է ստեղծել ազգերի ասոցիացիա՝ քաղաքական անկախության, տարածքային ամբողջականության եւ ինչպես մեծ, այնպես էլ փոքր ազգերի հավասարության փոխադարձ երաշխիքներ պարունակող համաձայնության հիման վրա»:

1919թ. ստորագրված Վերսալի պայմանագրի տեքստի մեջ մտավ պատերազմում հաղթանակ տարած պետությունների նախաձեռնությամբ ստեղծված նոր միջազգային կազմակերպության՝ Ազգերի Լիգայի Կանոնակարգը, որով եւ սկիզբ դրվեց նրա աշխատանքին:

Այսօր քննադատներն ասում են, որ Ազգերի Լիգան ստեղծման պահից արդեն լիարժեքորեն գործելու հնարավորություն եւ իրական իշխանություն ունեցող կազմակերպություն չէր, քանի որ նախագծի հեղինակները չէին կարողացել կամ գուցե չէին համարձակվել բավա-

րար լիազորություններ ունեցող իրոք անկախ միջազգային մարմին ստեղծել: Սակայն նման կազմակերպության ստեղծման փաստը ինքնին կարելու էր, եւ առանց նրա բերած փորձի՝ հետագայում ստեղծված միջազգային կազմակերպությունների գործունեությունը շատ ավելի թերի կլիներ: Ազգերի Լիգան իր ֆորմալ գոյությունը պահպանեց մինչեւ 1946թ.:

Ավելի կատարյալ եւ լուրջ լիազորություններ ունեցող համաշխարհային կարգավորիչ եւ կանոնակարգող կազմակերպության ստեղծման գաղափարն արտահայտվել էր դեռ հակահիտլերյան կոալիցիայի հիմնական երկրների ղեկավարների 1943թ. կայացած Մոսկովյան կոնֆերանսի ժամանակ:

Այդ կազմակերպության ստեղծման գաղափարը բխում էր ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի «չորս ոստիկանների» հայեցակարգից, համաձայն որի՝ հետպատերազմական խաղաղությունը եւ անվտանգությունը պետք է երաշխավորվեր չորս մեծ տերությունների՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության եւ Չինաստանի միասնական ու համաձայնեցված ջանքերի շնորհիվ: Նախագահ Ռուզվելտը երբեք չէր թաքցնում, որ չի ընկալում Ֆրանսիան որպես մեծ տերություն:

1944թ. սեպտեմբերին կայացած ԽՍՀՄ, Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ ներկայացուցիչների հանդիպման արդյունքում ձեւավորվեց մի փաստաթուղթ, որը կոչվեց «Առաջարկություններ Անվտանգության համընդհանուր միջազգային կազմակերպության ստեղծման վերաբերյալ», որն ստացավ նաեւ Չինաստանի հավանությունը:

Այն հարցերը, որոնց շուրջ կողմերը համաձայնության չէին կարողացել գալ, շարունակեցին քննարկվել Յալթայի կոնֆերանսում, որտեղ որոշվեց, որ Խորհրդային Միությունը եւ Մեծ Բրիտանիան պետք է սկսեն բանակցություններ Չինաստանի եւ Ֆրանսիայի հետ (այս երկրին մեծ տերության կարգավիճակ տալու հարցում Ու.Չերչիլը կարողացավ համոզել Ֆ.Ռուզվելտին), որպեսզի նրանք եւս մասնակցեն Սան Ֆրանցիսկոյում կայանալիք կոնֆերանսին այլ պետությունների հրավիրելու գործընթացին: Այդ կոնֆերանսին մասնակցելու էին հրավիրվել այն բոլոր երկրները, որոնք 1942թ. հունվարի 1-ին ստորագրել էին Միավորված Ազգերի Յուրահավասար կազմակերպության ստորագրող պետությունների նպատակը ոչ միայն պատերազմում հաղթանակ տանելն է, այլեւ արդար եւ ամուր խաղաղություն ապահովելը, ինչպես նաեւ այն երկրները, որոնք մինչեւ 1945թ. մարտի 1-ը պատերազմ էին հայտարարել ֆաշիստական երկրներին:

1945թ. հունիսին Սան Ֆրանցիսկոյում կայացած կոնֆերանսը իր

աշխատանքի վերջին միստի ընթացքում ընդունեց ՄԱԿ Կանոնադրու-
թյունը, որը ուժի մեջ մտավ 1945թ. հոկտեմբերի 24-ին:

ՄԱԿ-ը ստեղծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթաց-
քում եւ վավերացրեց վերջինիս արդյունքները: Կազմակերպության ամ-
բողջ գաղափարախոսությունը սկսել էր ձեւավորվել այն ժամանա-
կաշրջանում, երբ հակահիտլերյան կոալիցիայի երեք առաջատար պե-
տությունների առաջնորդները ամեն ինչ անում էին հաղթանակի համար,
իսկ դա նշանակում էր, որ միմյանց նկատմամբ նրանց քաղաքականու-
թյունը հիմնված էր փոխգիշուների ճկուն համակարգի վրա, ինչը հնա-
րավոր դարձրեց հետպատերազմական աշխարհի կառավարման համա-
կարգի վերաբերյալ ռուզվելտյան գաղափարներն ընդունել որպես հիմք
Միավորված Ազգերի Կազմակերպության համար:

Հասկանալի է, որ Ռուզվելտի մահից եւ, հատկապես, պատերազմի
ավարտից հետո, երբ պարզ դարձավ, որ Խորհրդային Միությունը՝ մի
կողմից, իսկ Մեծ Բրիտանիան՝ մյուս, անում են ամեն ինչ, որպեսզի
իրենց բանակների ազատագրած երկրները մտնեն սեփական հսկողու-
թյան տակ, իսկ Միացյալ Նահանգներում նախագահ դարձած Յ.Տրու-
մենի համար խորթ էին իր մեծ նախորդի ունիվերսալիստական գաղա-
փարները, «չորս ոստիկանների» հայեցակարգը պետք է մոռացվեր,
ինչը եւ տեղի ունեցավ:

Շատ շուտով Մոլոտովը հրաժարվեց «Մարշալի ծրագրից», Չերչիլը
արտասանեց իր Ֆուլտոնյան հռչակավոր ճառը, ստեղծվեցին ՆԱՏՕ-ն եւ
Վարշավայի ռազմաքաղաքական բլոկը: Սկսվեց սառը պատերազմը, որն
արդեն բոլորովին այլ համաշխարհային իրավիճակ էր բնութագրում.
Երկու հակամարտող ճամբարներ, ուժերի բալանս, միջուկային զենքի
առկայություն, որը երկու գերպետություններին թույլ էր տալիս ուժերը
չափել միայն երկրազնդի հեռավոր անկյուններում: Այս նոր իրավիճակին
ՄԱԿ համակարգն արդեն չէր համապատասխանում:

Իր սովորական առօրեական գործունեության շրջանակներում օգ-
տակար եւ էֆեկտիվ լինելով՝ ՄԱԿ-ը անմիջապես դրսեւորում էր իր թու-
լությունները բոլոր այն դեպքերում, երբ կողմերի հակասություններն
ունենում էին ծայրահեղ դրսեւորումներ: Այդպիսին էր, օրինակ, արաբա-
խորայելական հակամարտությունը, որի վերաբերյալ ՄԱԿ-ն ընդունել է
տասնյակ որոշումներ, սակայն այդ բոլոր որոշումները մնացել են թղթի
վրա, իսկ հակամարտությունը մի քանի անգամ վերաճել է լայնածավալ
պատերազմի:

Անշուշտ, բոլոր թերություններով հանդերձ, ՄԱԿ Գլխավոր ասամբ-
լեայի նստաշրջանները եւ Անվտանգության խորհրդի աշխատանքը, միշտ

գտնվելով համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում, սառը պատերազմի տարիներին մեծ դեր կատարեցին հասարակական կարծիքի ձեւավորման առումով: Լինելով երկու ճամբարների պայքարի եւ համաշխարհային հավասարակշռության հայելին՝ ՄԱԿ թե՛ առանձին կառույցները եւ թե՛ գործունեությունը՝ ընդհանուր առմամբ դրական դեր կատարեցին խաղաղության եւ կայունության հաստատման տեսակետից:

Զնայած ՄԱԿ-ն ունի ստիպելու եւ ճնշում գործադրելու բավականին լայն հնարավորություններ, սակայն այն իր որոշումների ընդունման գործընթացի հետ կապված լրջագույն խնդիր ունի: Հարցն այն է, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի հինգ անդամները վետոյի միջոցով կարող են փակել ցանկացած որոշման ճանապարհը: Բացի դա, այդ հինգ երկրներով այսօր չի սպառվում աշխարհի ամենահզոր, ազդեցիկ, մեծ տարածք կամ բնակչություն ունեցող պետությունների ցանկը, ինչը նշանակում է, որ ներկա պայմաններում այդ որոշումները շատ հեշտ կարող են կասկածի տակ դրվել:

Սառը պատերազմի ավարտից հետո երկրագնդի միակ գերտերությունը Միացյալ Նահանգներն է: Եթե նախկինում ՄԱԿ Անվտանգության խորհրդի ընդունած որոշումներն արդյունք էին ԱՄՆ եւ Խորհրդային Միության համաձայնության եւ մյուս երկրների համար ունեին պարտադիր բնույթ, ապա ներկայումս այդ մարմնի գործունեությունը կարելի է համարել խաթարված: Դրա ապացույցն է այն, որ արդեն երկու անգամ՝ Հարավսլավիային ՆԱՏՕ-ի հարվածներ հասցնելուց եւ Իրաք ներխուժելուց առաջ, ՄԱԿ Անվտանգության խորհուրդն անտեսվում է:

Եթե առաջին դեպքում Հարավսլավիայի նկատմամբ ուժ գործադրելու որոշումը լուրջ հակասություններ չառաջացրեց Միացյալ Նահանգների եւ իր՝ ՆԱՏՕ-ի դաշնակիցների միջեւ, ապա երկրորդը՝ Իրաք ներխուժելը, բացահայտեց այն սկզբունքային արժեքային հակասությունները, որ գոյություն ունեն ներկայումս ԱՄՆ եւ գրեթե բոլոր մյուս հզոր պետությունների միջեւ:

Իրաքյան հիմնահարցի շուրջ ծավալված իրադարձություններն ու գործընթացները նաեւ ապացուցեցին, որ «հետսառըպատերազմյան աշխարհում» ձեւավորվել է մի նոր գերհզոր համակարգ՝ Եվրամիությունը, որը կարող է եւ գործում է որպես նոր միասնական հակակշիռ միայն այդպիսին թվացող «միաբեւեռ աշխարհում»:

Իրաքի պատերազմի շուրջ ծավալված իրադարձությունները հերթական անգամ ի ցույց դրեցին այն իրողությունը, որ ՄԱԿ համակարգը պահանջում է լուրջ վերածելումներ, որոնք պետք է միտված լինեն ժամանակակից աշխարհի իրական կառավարման համակարգ ստեղծելուն:

Այլապես միայնակ մնացած միակ գերիզոր պետությունը, իր վրա վերցնելով համաշխարհային կարգուկանոնի պահպանման պատասխանատվությունը, կարող է ստեղծել նոր կոնֆլիկտների համար այնպիսի նպաստավոր պայմաններ, որոնց հետեւանքով միջազգային հարաբերությունների նոր համակարգ այդպես էլ չծնվի, ինչը հղի է անկանխատեսելի հետեւանքներով:

Որո՞նք են ներկայումս քննարկվող բարեփոխումների հնարավորությունները:

Նախեւառաջ ակտիվորեն քննարկվում է, այսպես կոչված, «ներքին ռեֆորմի» իրականացման հնարավորությունը, որը հետեւյալն է. ՄԱԿ մշտական կոմիտեների եւ հանձնախմբերի թիվը կտրուկ ավելացվում է, ինչի համար պետք է մեծացվի այս կազմակերպության ֆինանսավորումը, եւ արդյունքում՝ միջազգային այդ կառույցները ստանում են շատ ավելի լայն լիազորություններ, ինչը թույլ է տալիս նրանց շատ ավելի արագ եւ ճկուն արձագանքել բոլոր ի հայտ եկող վտանգներին եւ պահանջներին:

Երկրորդ քննարկվող տարբերակը՝ հայեցակարգային բարեփոխությունն է, ըստ որի (քննարկվող հայեցակարգի մասնավոր տարբերակները բազմաթիվ են) ՄԱԿ համակարգը պետք է համաձայնեցվի ժամանակակից աշխարհի իրավիճակին, այսինքն՝ Անվտանգության խորհրդի կազմ պետք է մտնեն այն պետությունները, որոնք Երկրորդ աշխարհամարտում պարտվելու հետեւանքով դուրս մնացին այս միջազգային կազմակերպության որոշումների ընդունման համակարգից: Դրանք Գերմանիան եւ Ճապոնիան են:

Բացի այդ, առաջարկվում է ընդլայնել ներկայումս ստեղծված համաշխարհային ամենահզոր պետությունների ութնյակի շրջանակները՝ ներգրավելով այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չնդկաստանը, Բրազիլիան (տրվում են նաեւ մի քանի այլ պետությունների անուններ) եւ այդ կառույցով փոխարինել մշտական անդամների համակարգը:

Այս նույն հայեցակարգի շրջանակներում կան նաեւ առաջարկներ, որոնք անհրաժեշտ են համարում հրաժարվել նախկին մոտեցումից, համաձայն որի՝ միայն պետություններն էին ներկայացված ՄԱԿ-ում եւ Անվտանգության խորհրդի կազմի մեջ ընդգրկել տարածաշրջանային կազմակերպությունները:

Բոլորովին վերջերս, հավանաբար ոգեշնչված հանտինգտոնյան «քաղաքակրթությունների պայքարի» տեսությունից, բարձրաձայնվեց մի մոտեցում, համաձայն որի՝ համաշխարհային հավասարակշռությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, եթե բոլոր քաղաքակրթությունները ներկայացված լինեն ՄԱԿ ԱԽ-ում:

Ինչպես ասում են, տարբերակները շատ են:

Սակայն վերջին երեք դարերի պատմությունը ցույց է տալիս, որ լայնածավալ պատերազմի վտանգը սպառնում է հատկապես այն ժամանակ, երբ համաշխարհային բալանսը կամ հաշվի չի առնվում, կամ էլ սխալ է հաշվարկվում: XXI դարի կառավարման համակարգում գլոբալիստական քաղաքականությունը նոր վտանգների աղբյուր է դառնում, քանի որ հնարավորություն է ընձեռում աննկատ եւ արագորեն խախտել նույնիսկ ստեղծված հավասարակշռությունը: Համաշխարհային գլոբալ կառավարման համակարգի գաղափարը պետք է առաջին հերթին հաշվի առնի այս հիմնահարցը, ինչն իրականում առաջարկվող տարբերակներից ոչ մեկում էլ առկա չէ:

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ՝
ՍՈՒՖԻԶՄԻ ՄԱՍԻՆ
Արաբս Փաշայան**

Իսլամում խորհրդապաշտություն (միստիցիզմ) ասելով նկատի է առնվում սուֆիզմը: Գոյություն ունեն *սուֆիզմ* եզրույթի մի քանի ստուգաբանություններ, որոնցից ամենատարածվածն այն է, թե սուֆիզմը ծագում է արաբերեն *սուֆ*՝ բուրդ բառից (սուֆի ճգնավորները տարբերվելու համար կրում էին բրդյա քուրձ):

Արաբամահմեդական միջավայրում իսլամական միստիցիզմի ի հայտ գալուն նպաստեցին աշխարհուրացության տրամադրություններ արտահայտող ասկետիզմի (*զուհդ*) գաղափարները, որոնք առաջ եկան իսլամի ձեւավորման հետ գրեթե միաժամանակ: Սկզբնավորման վաղ փուլում սուֆիներին անվանում էին *զահիդներ*, այսինքն՝ ասկետներ: Այդ շրջանից ի վեր սուֆիզմում ձեւավորվեց պաշտամունքը ինքնական աղքատության (*ֆակր*) նկատմամբ՝ որպես հոգու փրկության կատարյալ միջոց:

VIII-X դարերում սուֆիզմը, դուրս գալով ասկետիզմի շրջանակներից, սկսեց զարգանալ որպես ինքնուրույն կրոնափիլիսոփայական ուսմունք, որում, իսլամականից բացի, առկա են նաեւ միթրայականության, նեոպլատոնական գաղափարների, պանթեիստական տեսության, հնդկական փիլիսոփայության, քրիստոնեական թեոսոֆիայի տարրեր:

Ձեւավորման վաղ շրջանում սուֆիզմը հակադրվում էր ուղղափառ իսլամին: Սովորական պատկերների տակ սուֆիները քողարկում էին այլախոհ մտքեր: Սակայն XI դարում մահմեդական միստիկ փիլիսոփա ալ-Դազալին առաջ քաշեց այն թեզը, որ սուֆիզմը պետք է ամբողջովին հենվի Դուրանի եւ *սուլենայի* վրա: Այդ շրջանից ի վեր սուֆիզմը ձեւափոխվեց եւ համապատասխանեց ուղղափառ իսլամին:

Սուֆիզմին բնորոշ է ձգտումը՝ աստվածային խորհուրդների, գաղտնի ու թաքնված գիտելիքների վերծանման, մարդու հոգեկան աշխարհի ամենափոքր ծալքերի բացահայտման, որ միայն իրազեկ մարդկանց (*արիֆուն*) շնորհն է:

Սուֆիզմի աշխարհընկալման հիմքում ընկած է միակ աստծո գաղափարը, որ գոյի սկզբնապատճառն է: Աշխարհը եւ կենդանական գոյը աստծո արտահեղման (*emanatio*) արդյունքն է: Աստծո էությունը թափանցել է ամենուր տարբեր ձեւերով՝ չնայած նախնական միասնությանը:

Աստված այն ամբողջությունն է, որից առանձնացել են մասերը, որոնք ձգտում են միավորվել ամբողջին: Սա նշանակում է, թե մարդը կարող է միավորվել աստծո հետ, հոգեւոր եւ ինտուիտիվ կերպով ճանաչել նրան, սակայն միայն հոգու ինքնակատարելագործման միաստիկ ճանապարհի՝ *տարիկայի* (ուղի) միջոցով: *Տարիկան* ունի երեք հիմնական փուլեր (*շարի'ա, տարիկա, հակիկա*):

Շարի'ային (օրենք) հետեւել նշանակում է բարեպաշտ կյանք վարել՝ աստվածային օրենքների համաձայն: *Շարի'ան* նախապատրաստական փուլն է, որն ընթացնելուց հետո միայն մարդու առաջ կարող է բացվել *տարիկան*, որ ճշմարտության միաստիկ ճանաչման ու դրա մեթոդների համակարգն է: Ձգտելով կրոնական-բարոյական մաքրության՝ մարդը մուտք է գործում մտահայեցողության եւ հոգեֆիզիկական վարժությունների ոլորտ, որպեսզի ինտուիտիվ կերպով ճանաչի ճշմարտությունը: *Տարիկան* հոգու մի յուրահատուկ ուղեցույց է, որ փնտրում է աստծուն, ձգտում հասնել ու միանալ նրան: Միաստիկ ճանապարհին մարդը պետք է ձեռք բերի մի շարք կարեւոր որակներ՝ թեւակոխելով տարբեր փուլեր (*մակամ*) ու հոգեվիճակներ (*հալ*): *Մակամները* սուֆին հաղթահարում է աստիճանաբար՝ ձեւավորվելով որպես կատարյալ մարդ: *Մակամներից* յուրաքանչյուրը, որ հատուկ է այդ փուլին, որոշակի հոգեվիճակի (*trance*) արդյունք է: Դրանցից կարեւորագույններն են՝ ապաշխարանքը, բարեպաշտությունը, ժուժկալությունը, աղքատությունը, համբերատարությունը, ապավինումը եւ հնազանդությունը:

Ապաշխարանքը կամ մեղքերի թողությունը պարզ գղջում չէ, այլ որոշակի հոգեվիճակ, ինքնաձաղկման փորձ, աղոթքի եւ ողբի միջոցով աստծուն հաղորդակից դառնալու ձգտում: Բարեպաշտությանը հատուկ է խիստ տարանջատումը թույլատրելիի եւ անթույլատրելիի միջեւ: Այս երեւույթը հանգեցնում է ժուժկալության, որ նշանակում է ձերբազատվել մեղքից, ամեն անցողիկից, այն ամենից, ինչ հեռացնում է մարդուն աստծուց: Աղքատությունը ասելով նկատի է առնվում ոչ միայն ինքնական կարիքին տրվելն ու աշխարհիկ հաճույքներից եւ նյութական արժեքներից հրաժարվելը: *Չաղիսներում* Սուհամմադ մարգարեին վերագրվող՝ «աղքատությունն իմ հպարտությունն է» ասույթի համատեքստում *ֆակրը* ոչ թե նյութական աղքատության, այլ աստծո առաջ սեփական չնչինության եւ հոգեւոր աղքատության գիտակցության նշան է: Միաժամանակ մարդը պետք է համբերատար կերպով դիմագրավի կյանքի դժվարությունները, քանի որ դրանք նախասահմանված են: Աստծուն ապավինելու գաղափարը մարդուն ստիպում է վանել իրենից վաղվա օրվա մտահոգությունը եւ աստծուն ապավինելու միջոցով՝ բավարարվել ներկա պահի

իրողությամբ. մարդը պետք է համոզված լինի, որ աստված վաղը նույնպես հոգ է տանելու իր մասին այնպես, ինչպես այսօր: Աստծուն հնազանդվելու փուլում մարդը ոչ միայն խոնարհաբար դիմագրավում է ճակատագրի ցանկացած հարված, այլև երբեք չի խորհում տխուր երեւոյթների եւ վշտի մասին: Սուֆիի մտքերն այնքան են խորասուզված հոգեւոր խնդիրներով, որ նրան շոջապատող իրականությունը հետաքրքրություն չի ներկայացնում եւ սպառնում է:

Միստիկ ճանաչողության փուլում սուֆին, վերացարկվելով զգայական աշխարհից, հանդես է բերում տարաբնույթ էքստատիկ հոգեվիճակներում հայտնվելու եւ ժամանակավորապես աստծո հետ շփվելու կամք: Աստծուն միաձուլվելու գերագույն միստիկ վիճակը, որին ձգտում են սուֆիները, ինչպես նշեցինք, կոչվում է *հալ* (բնազանց վիճակ): *Հալ* ունի տարբեր ձևեր ու աստիճաններ: Սուֆիների կարծիքով՝ եթե մարդն ի վիճակի է *մակամների* սեփական ջանքերով հասու դառնալու կամք ցուցաբերել, ապա *հալ* աստվածային բարեհաճության եւ նախասահմանության արդյունք է, որ կարող է մի ակնթարթում անհետանալ այնպես, ինչպես ծնվել է: Հոգեվիճակներից կարեւորագույններն են՝ մերձավորություն աստծո հետ, սեր աստծո նկատմամբ, վախ մեղավորության գիտակցությունից եւ փոքր-ինչ չափով աստծո առաջ սեփական պարտականությունները կատարելու անկարողությունից, հույս եւ հավատ աստծո բարեգթության ու ողորմածության հանդեպ, համոզվածություն հոգեւոր աշխարհի իրականության հարցում:

Ճշմարտության միստիկ ճանապարհի՝ *տարիկայի* վերջին փուլում (*հակիկա*) սուֆին հաջողվում է անմիջական եւ մշտական կապ հաստատել բացարձակ ճշմարտի՝ աստծո հետ եւ ճանաչել նրան: Միայն *տարիկայի* միջոցով է մարդը ձեռք բերում ճշմարտությունը ճանաչելու միստիկ փորձ, որ տարբերվում է սովորական կրոնական փորձից եւ հասանելի է միայն ընտրյալներին: Պատահական չէ, որ սուֆիզմին կամ սուֆիական եղբայրություններին որպես հոմանիշ օգտագործվում է *տարիկա* եզրույթը:

Ողջ *տարիկան* անցած սուֆին ի վերջո հասնում է սեփական անձի գիտակցման լիակատար կորստին (*ֆանա'*) եւ ամբողջովին տարրալուծվում աստվածային էության մեջ: Իր անցողիկ ես-ի ոչնչացմամբ՝ մարդը գիտակցում է Հավերժության գաղափարը, որ անսահմանության գիտակցությունն է:

Ֆանա'ի ընթացքում մարդկային հոգին շփվում է աստծո հետ: Սա նշանակում է, որ հոգին սպառում է միայն իր որակները, սակայն պահպանում իր հիմքը՝ չկորցնելով անհատականությունը: Շփվել աստծո

հետ, ինչպես համոզված են չափավոր սուֆիները, չի նշանակում ձուլվել նրա մեջ, քանի որ մարդկային բնույթը չի կարող փոխակերպվել աստվածայինի: Սակայն ավելի ծայրահեղ կողմնորոշում ունեցող սուֆիների կարծիքով՝ աշխարհը եւ մարդկային հոգիները աստվածային են ոչ թե էմպիրիկ կեցությամբ, այլ՝ հիմքով: Այդ իսկ պատճառով հոգու աստիճանական ձերբազատումը զգայական կեցությունից եւ աշխարհիկից, հրաժարումը սեփական ես-ից սուֆիի մեջ առաջ են բերում *ֆանա'յի* վիճակ, այսինքն՝ հոգին եւ անհատականությունը ձուլվում են աստծո մեջ՝ որպես համաաշխարհային ես-ի:

Ֆանա'յի միջոցով հաղթահարելով աշխարհիկ զգացողությունները՝ սուֆին հասնում է միստիկ կատարելության եւ ինտուիտիվ կերպով ճանաչում աստծո ճշմարիտ էությունն ու գիտակցում իր կապն աստծո հետ: Այդ իսկ պատճառով սուֆիներն իրենց հաճախ անվանում են *աշլ ալ-հակիկա*, այսինքն՝ ճշմարտության մարդիկ:

Սուֆիզմի կենտրոնական տարրը, ինչպես նշեցինք, աստծո միստիկ ճանաչողության եւ աստվածային էության հետ մերձենալու գաղափարն է, որ ոգեկոչվում է հուզավառության կամ հափշտակության (*extasis*) հոգեվիճակում: Աստծո հետ կարելի է մերձենալ նրա նկատմամբ սիրուց արբած միստիկ հոգեվիճակում: Այս տեսակետին հակադրվում է մեկ այլ սուֆիական՝ առավել չափավոր տեսակետ, թե աստծուն հնարավոր է մերձենալ միստիկ զգոնության վիճակում:

Աստծո հետ շփվելու համար սուֆիները կատարում են տարաբնույթ հոգեվարժություններ մտահայեցողության (*meditatio*) ոլորտում: Սուֆիները մեկուսանում են աշխարհից՝ տրվելով *զիքրի* (*հիշատակություն*), որն աստծուն փառաբանող խոսքերի անընդհատ կրկնություն է եւ հաճախ ուղեկցվում է ջերմեռանդ կրոնական երգասացությամբ ու էկստատիկ պարով: *Ջիքրը* կարող է կատարվել ցածրաձայն կամ բարձրաձայն:

Չուզավառության վիճակի հետ է առնչվում հոգեբանական մի երեւույթ, որ կապված է ինքնության կորստի հետ: Մարդը, վերացարկվելով սեփական ես-ից, սկսում է հանդես գալ աստծո անունից: IX դարի նշանավոր սուֆի տեսաբան ալ-Յալլաջը մահվան է դատապարտվել, քանի որ ասել է, թե՝ ես ճշմարտությունն եմ (կամ աստվածն եմ):

Չետաքրքրական է, որ իրենց ասկետիկ կեցվածքի համար սուֆիները չեն ակնկալում պարզեւատրում երկնային կյանքում: Նրանց սերն աստծո նկատմամբ անշահախնդիր է ու անսահման: Սուֆին երախտապարտ է աստծուն, որ նա գոյություն ունի:

XI դարի կեսերին սուֆիզմի գաղափարները տարածվեցին ողջ մահմեդական աշխարհում: Չենց այդ շրջանում սուֆիզմը, որ մինչ այդ

էլիտար բնույթ ունեն, ժողովրդականացավ: XII դարի վերջին սկսեցին ձեւավորվել սուֆիական եղբայրություններ: Պարսկալեզու միջավայրում գործող սուֆիական եղբայրությունների անդամները կոչվում էին *դերվիշ*, որ համարժեք է արաբերեն *սուֆի* եւ *ֆակիր* (աղքատ) բառերին: Կրոնափիլիսոփայական հոսանքից սուֆիզմը վերաճեց համակարգված կառույցի, որի արդյունքում կայացավ աշակերտ - ուսուցիչ (*մուրիդ - մուրշիդ*) ինստիտուտը: Միայն մուրշիդի (*շեյխ, փիր*) հսկողությամբ կարող էր նորադարձը ասկետիզմի միստիկ ճանապարհ անցնել: Սակայն մինչ այդ մուրիդը մուրշիդին պետք է ապացուցեր *տարիկան* անցնելու իր կամքը, որից հետո միայն ընդգրկվեր սուֆիական շրջանակում: Մուրիդից պահանջվում էր ամբողջովին ենթարկվել մուրշիդի կամքին, ընդունել նրա հեղինակությունը աշխարհիկ եւ կրոնական հարցերում: Մուրիդը կանոնավորապես կիսում էր իր խոհերը, ինչպես նաեւ խոստովանում մեղքերը մուրշիդին: Սուֆի մուրշիդները հռչակվում էին իրենց լայն ճանաչողությամբ, բարեպաշտությամբ եւ սրբացվում էին որպես *վալի* (կամ *քութբ*): Նրանց վերաբերվում էին որպես ընտրյալի, աստվածային հայտնությունների գաղտնիքներն ու խորհուրդները բացահայտողի եւ աստծո հետ անմիջական կապ ստեղծողի:

Սուֆիական եղբայրությունները մահմեդական աշխարհում գործում են մինչեւ օրս եւ բավական տարածում ունեն: Դրանց գլխավոր շեյխերը մեծ հեղինակություն են վայելում մահմեդական համայնքներում եւ առանձին դեպքերում քաղաքական դերակատարում ունենում:

ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՄՆ-ԻՆ ԱՆՉԱՓԵԼԻ ՎՆԱՍ Է ՀԱՍՅՐԵԼ Ջորջ Սորոս

Սեպտեմբերի 11-ից հետո ես հասկացա, որ բաց հասարակության արժեքներն ու սկզբունքները պաշտպանության կարիք ունեն նաեւ բուն Ամերիկայում: Սեպտեմբերի 11-ի իրադարձությունները հանգեցրին ժողովրդավարության գոյության համար բացարձակորեն անհրաժեշտ կարելորագույն գործընթացի՝ ցանկացած հարցի ազատ քննարկման դադարեցմանը: Նախագահ Բուշը քննադատական ձայներին ստիպեց լռել՝ ցանկացած քննադատություն հայտարարելով ոչ հայրենասիրական: Նրա «կա՛մ դուք մեզ հետ եք, կա՛մ ահաբեկիչների կողմը» խոսքերն ինձ համար հնչեցին որպես տազնապի ազդանշան: Վախենում եմ, որ նա մեզ տանում է ծայրահեղ վտանգավոր ուղիով: Մենք կորցնում ենք արժեքներ, որոնց շնորհիվ Ամերիկան դարձել է մեծ պետություն:

Համաշխարհային առևտրի կենտրոնի երկվորյակ աշտարակների խորտակումն այնքան սոսկալի իրադարձություն էր, որ պահանջեց վճռական հակադարձում: Սակայն նախագահը թույլ տվեց կոպիտ հայեցակարգային սխալ. այն ակնառու փաստը, որ ահաբեկիչները ոճրագործ են, չի հանդիսանում ցանկացած հակամիջոցի մեքենայական արդարացում:

Աֆղանստան ներխուժումն արդարացված էր. հենց այնտեղ էին գտնվում բեն Լադենը եւ Ալ-Ղաիդայի մարզական ճամբարները: Ներխուժումն Իրաք չուներ նման արդարացում: Չցանկանալով՝ նախագահ Բուշը բեն Լադենին իսկական նվեր մատուցեց:

Պատերազմը եւ օկուպացիան անխուսափելիորեն ուղեկցվում են անմեղ զոհերով: Մենք հաշվում ենք, թե Իրաքից որքան ամերիկյան զինվոր է վերադառնում ցինկե դագաղում. նրանց թիվն արդեն անցել է 1000-ից: Սակայն մնացյալ ողջ աշխարհը տեսնում է, որ, բացի նրանցից, ամեն օր զոհվում են նաեւ իրաքցիներ: Նրանց զոհերը գերազանցում են մեր կորուստները 20 անգամ: Ոմանք սպանվել են՝ հարձակվելով մեր զինվորների վրա, բայց զոհվում են նաեւ շատ ու շատ բուլրովին անմեղ մարդիկ, այդ թվում՝ կանայք ու երեխաներ: Յուրաքանչյուր անմեղի մահ օժանդակում է ահաբեկիչներին՝ համալրելով նրանց շարքերը եւ բորբոքելով ցասումը Ամերիկայի հանդեպ:

Սեպտեմբերի 11-ից անմիջապես հետո համայն աշխարհում բարձրացավ ամերիկացիների հանդեպ անկեղծ կարեկցանքի ալիքը: Այժմ դրան փոխարինել է նույնքան համատարած վրդովմունքը: Այսօր ավելի շատ մարդիկ են պատրաստ սեփական կյանքի գնով սպանել ամերիկացիներին, քան սեպտեմբերի 11-ին էր. մեր անվտանգությունը, ինչ էլ որ ասի նախագահ Բուշը, ոչ թե ամրապնդվեց, այլ թուլացավ: Վախենում են, որ մենք հայտնվել ենք բռնության հետեւողական ծավալման փակ շրջանում, որտեղ մեր երկյուղներն ու նրանց ցասումը սնուն են մեկը մյուսին: Այս գործընթացը դժվար թե ավարտվի տեսանելի ապագայում: Վերընտրելով նախագահ Բուշին՝ մենք ողջ աշխարհին հասկացնելու ենք, որ հավանություն ենք տալիս նրա քաղաքականությանը, եւ այնժամ մեզ սպասվում է շատ երկար պատերազմ:

Մենք գտնվում ենք սեպտեմբերի 11-ի ցնցումից ծնված եւ Բուշի վարչակազմի կողմից դիտավորյալ կերպով խրախուսվող կոլեկտիվ մոլորության գերությունում: Նախագահ Բուշը չկարողացավ ոչնչացնել բեն Լադենին, քանզի արդեն պատրաստվում էր հարձակվել Իրաքի վրա: Իսկ ներխուժումն Իրաք այնչափ ավելացրեց կյանքը վտանգելու գնով ամերիկացիների դեմ պայքարելու պատրաստ մարդկանց թիվը, որ մենք պարզապես անկարող ենք նրանց բոլորին ոչնչացնել. արդյունքում ծագեց հենց այն մոզական շրջանը, որի մասին խոսում են:

Նախագահ Բուշը սիրում է ասել, թե ահաբեկիչները մեզ ատում են մեր էության, մեր ազատասիրության համար, այլ ոչ թե մեր արարքների: Անշուշտ, դրանում նա սխալվում է: Նա պնդում է նաեւ, որ Աբու Գրեյբ բանտում կտտանքները մի քանի «քոստո ոչխարների» ձեռքի գործն են: Այստեղ էլ նա նորից ճիշտ չէ: Դրանք կալանավորների հետ վարվելակարգի արդյունք են՝ մշակված պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի կողմից: Իսկ դրա համար պետք է հատուցեն Իրաքի մեր զինվորները:

Ինչպե՞ս է նախագահ Բուշին հաջողվում համոզել մարդկանց, թե ինքն ընդունակ է մեր անվտանգությունն ապահովել ավելի լավ, քան Ջոն Զոն Զերին: Նա պարզապես խաղում է երկվորյակ աշտարակների անկումից ծնված սարսափի վրա եւ մարդկանց ներշնչում է վտանգի զգացողություն: Փորձության պահերին մարդիկ համախմբվում են ազգային խորհրդանիշերի շուրջ, եւ նախագահ Բուշը շահագործում է դա: Նրա նախընտրական քարոզարշավը հիմնված է այն համոզմունքի վրա, թե մարդիկ, ըստ էության, անտարբեր են ճշմարտության նկատմամբ եւ ինչին կուզեք՝ պատրաստ են հավատալ, եթե լսեն դա կանոնավոր կերպով, հատկապես պատերազմող երկրի նախագահի շուրթերից:

Մեզ հետ ինչ-որ բան այնպես չէ, եթե մենք ընկնում ենք այդ ծուղակը: Օրինակ, ամերիկացիների 40 տոկոսը առաջվա պես կարծում է, թե Սադամ Յուսեյնը մասնակից է սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններին, չնայած նրան, որ այդ իրադարձությունները հետաքննող՝ հենց նախագահի կողմից ստեղծված եւ հանրապետականների գլխավորած հանձնաժողովն ամենայն պարզությամբ հաստատեց նրա անմեղակացությունը:

Նախագահ Բուշը սեպտեմբերի 11-ի իրադարձություններն օգտագործում է սեփական նպատակների համար, որոնք քիչ ընդհանրություն ունեն ահաբեկչության դեմ պայքարի հետ:

Բուշի վարչակազմում փոխնախագահ Ղիք Չեյնիի գլխավորած հեղինակավոր խմբավորումն Իրաք ներխուժելու մասին երազում էր սեպտեմբերի 11-ից շատ առաջ: Ահաբեկչական գործողությունները նրանց հնարավորություն տվեցին իրականացնելու այդ մտադրությունները:

Իրաքի պատերազմը սխալ էր սկզբից մինչև վերջ, եթե, իհարկե, դրան վերջ կա: Հակառակ նախագահ Բուշի հիմնավորումներին, այս պատերազմը կամավոր ընտրության արդյունք էր, այլ ոչ թե ծայրահեղ անհրաժեշտություն: Տեսչական ստուգումների եւ պատժամիջոցների մեխանիզմն աշխատեց: ԱՄՆ ճնշման հետեւանքով ՄԱԿ-ը վերջիվերջո համաձայնվեց Իրաքի նկատմամբ կոշտ դիրք գրավել: Քանի դեռ երկրում գտնվում էին միջազգային տեսուչները, Սադամ Յուսեյնը ի վիճակի չէր սպառնալ մեր անվտանգությանը: Մենք կարող էինք հայտարարել հաղթանակի մասին, սակայն նախագահ Բուշը համառորեն ձգտում էր պատերազմ սանձազերծել:

Մենք այն սկսեցինք կեղծ պատրվակով: Իրաք ներխուժման իսկական շարժառիթները մինչ օրս էլ հրապարակայնության սեփականությունը չդարձան: Ջանգվածային ոչնչացման զենք, ինչպես նաեւ Ալ-Ղաիդայի հետ վարչակարգի կապերի ապացույցներ այնտեղ հայտնաբերել չհաջողվեց: Այդժամ նախագահ Բուշը հայտարարեց, թե մենք պատերազմը սկսել ենք հանուն Իրաքի ժողովրդի ազատագրման: Ժողովրդավարության ու բաց հասարակության աջակցմանն ուղղված իմ ողջ գործունեության փորձն ասում է, որ ժողովրդավարությունը սվիններով անհնարին է պարտադրել: Բացի այդ, ես ժողովրդավարության կառուցման գիտափորձի համար երբեք չեի ընտրի Իրաքը. այնտեղ տիրող քաոսն ընդամենը դա է ապացուցում:

Անշուշտ, Սադամը բռնակալ էր, եւ իրաքցիները, նաեւ ողջ աշխարհը կարող են միայն ուրախանալ, որ ազատվել են նրանից: Բայց այսօր իրաքցիներն ատում են ամերիկյան զավթիչներին: Մենք մի կողմ էինք

քաշվել ու հանգիստ հետեւում էինք Բաղդադի թաւանմանը: Որպէս օկուպացիոն իշխանություն՝ մենք պարտավոր էինք ապահովել օրինականություն եւ կարգուկանոն, սակայն այդ պարտականությունը մենք չկատարեցինք: Եթէ մենք Իրաքի ժողովրդի մասին հոգ տանեինք, ապա երկրի օկուպացիայի համար պետք է հատկացնեինք ավելի շատ զորք, քան ներխուժման համար էր: Մենք պետք է պահպանույթամբ ապահովեինք ոչ միայն նախարարությունաբերության նախարարությանը, այլեւ մյուս գերատեսչություններին, ինչպէս նաեւ թանգարաններին ու հիվանդանոցներին: Բաղդադն ու երկրի այլ քաղաքներ ավերվեցին մեր գրավումից հետո: Հանդիպելով դիմադրության՝ մենք դիմեցինք ժողովրդի մեջ թշնամության եւ անարգանքի զգացում առաջացնող մեթոդների: Այն, թէ ինչպէս էինք մենք տներ ներխուժում, թէ ինչպէս էինք վերաբերվում գերիներին, ծնեց վրդովմունք ու ցասում: Համաշխարհային հանրությունը մեզ դատապարտում է:

Նախ մենք ցրեցինք իրաքյան բանակը, իսկ հետո սկսեցինք այն վերաստեղծել: Նախ մենք փորձեցինք լուծարել «Բաաս» կուսակցությունը, իսկ հետո դիմեցինք նրա ֆունկցիոնների օգնությանը: Նախ մենք երկրի կառավարումը վստահեցինք գեներալ Ջեյ Հարներին, հետո նրա տեղում նշանակեցինք Փոլ Բրեմերին: Եվ վերջապէս, երբ ապստամբությունն ընդունեց անվերահսկելի չափեր, իրաքցիներից կազմեցինք կառավարություն: Որպէս նրա ղեկավար մենք ընտրեցինք մարդու, որը վայելում է ԿՀՎ հովանավորությունը եւ ունի «ամուր ձեռքի» կողմնակցի համբավ. սա քիչ է ժողովրդավարություն հիշեցնում:

Չնայած իրադրությունն Իրաքում վարդագույն երանգով ներկայացնելու Բուշի նախընտրական շտաբի փորձերին, իրականում այն սոսկալի տեսք ունի: Երկրի գրեթէ ողջ արեւմտյան մասը հանձնված է ապստամբների ձեռքը: Նույնիսկ այսպէս կոչված «կանաչ գոտին» (փոքր անկլավ Բաղդադի կենտրոնում, որտեղ ապրում եւ աշխատում են ամերիկացիները) ենթարկվում է ականակոծման: Հաջորդ տարվա հունվարին ազատ եւ արդար ընտրությունների անցկացման հավանականությունն «աչքի առաջ հալվում է», իսկ հորիզոնում նշմարվում է քաղաքացիական պատերազմի ուրվականը: Հուլիսին Բուշին ներկայացվեց հետախուզության զեկույցը՝ իրավիճակի խիստ մռայլ գնահատականով, սակայն նա անուշադրության մատնեց այն՝ ընտրողներին չտեղեկացնելով այդ տվյալների մասին:

Բուշի իրաքյան պատերազմը Միացյալ Նահանգներին անսահման վնաս է հասցրել: Այն թուլացրել է մեր ռազմական հզորությունը եւ խարխուլել մեր զինված ուժերի մարտական ոգին: Մինչ Իրաք ներխուժումը,

մենք տիրապետում էինք աշխարհի ցանկացած տարածաշրջանում ճնշող ռազմական ուժ կիրառելու կարողությանը: Այժմ մենք դրան ընդունակ չենք, քանզի «խրվել» ենք Իրաքում: Մենք աստիճանաբար կորցնում ենք Աֆղանստանի իրավիճակի վրա հսկողությունը: Հյուս. Կորեան, Իրանը, Պակիստանը եւ ուրիշ երկրներ էլ ավելի եռանդագին են իրականացնում միջուկային ծրագրերը. մի շարք այլ խնդիրներ նույնպես չեն գտնում համարժեք լուծումներ:

Առանց ՄԱԿ-ի հավանության ներխուժելով Իրաք՝ մենք խախտեցինք միջազգային իրավունքը: Ծաղրանքի ենթարկելով կալանավորներին ու նույնիսկ ենթարկելով նրանց կտտանքների՝ մենք խախտեցինք ժնեյան համաձայնագիրը: Նախագահ Բուշը պարծենկոտաբար հայտարարում է, թե մենք միջազգային ընկերակցության թույլտվության կարիքը չունենք, սակայն մեր գործողությունները վտանգի տակ են դնում մեր անվտանգությունը, հատկապես մեր զինվորների անվտանգությունը:

Մեր գորքերին վարժեցրել են ճնշող ռազմական ուժի կիրառմանը մարտի դաշտում: Նրանց չեն սովորեցրել օկուպացիոն ֆունկցիաներ: Ապստամբների հետ կռվելու անհրաժեշտությունը խարխլել է նրանց մարտական ոգին: Մեր զինվորներից ոչ քչերն են Իրաքից վերադառնում խոր հոգեկան ցնցումով եւ այլ խանգարումներով: Ցավոք, նրանցից շատերը չեն խուսափել նաեւ ֆիզիկական խեղումներից: Իրաքից հետո պետությանը հեշտ չի լինի զինված ուժերում հավաքագրել կամավորների, եւ, հնարավոր է, հարկ լինի մտցնել զորակոչային համակարգ:

Բուշի վարչակազմին կարելի է քննադատել նաեւ բազմաթիվ այլ քաղաքական ուղղություններում, բայց Իրաքն ունի բացառիկ կարեւորություն: Այս օկուպացիան մեզ վրա արդեն ահռելի գումար է նստել՝ մոտ 200 մլրդ դոլար: Ծախսերն այսուհետ էլ են աճելու. չէ՞ որ Իրաք գորք մտցնելն ավելի հեշտ էր, քան հանելը:

Common Dreams

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռուբեն Խուրշուդյան	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ	1
Մուշեղ Լալայան	
ՅԵՂԻ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ	
ԱՐՅԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ	6
Կարեն Վերանյան	
ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	13
Գագիկ Տեր-Հարությունյան	
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ ԵՎ	
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ	19
Դավիթ Հովհաննիսյան	
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ	25
Արաքս Փաշայան	
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ՝	
ՍՈՒՖԻԶՄԻ ՄԱՍԻՆ	31
Ջորջ Սորոս	
ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՄՆ-ԻՆ	
ԱՆՉԱՓԵԼԻ ՎՆԱՍ Է ՀԱՍՑՐԵԼ	36

*Շապիկի վրա պատկերված է
տեսարան Ջերմուկից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: